Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2009թ. դեկտեմբերի 7 -ի N 1055-Ն հրամանի

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0201 «ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԳԼՈՒԽ 1.
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0201 «ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Միջին մասնագիտական կրթության «Մասնագետ» որակավորման աստիճանի 0201 «Իրավագիտություն» մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73 -Ն որոշմամբ:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության համար մասնագիտացումներ չեն սահմանվել:

3. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն ավարտած, պետական ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտին շնորհվում է «Իրավագետ» որակավորում:

4. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝

1) առկա
2) հեռակա
3) դրսեկության (էքստեռնատ)
4) հեռավար (դիստանցիոն)

5. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

1) կրթության առկա ձևով
   ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով՝ 2 տարի
2) կրթության հեռակա ձևով
   ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով՝ 3 տարի
3) դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցման տևողությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ սահմանված կարգի որոշում է ուսումնական հաստատությունը:

6. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 2736 ժամ է, առավելագույն ծավալը՝ 4428 ժամ:

ԳԼՈՒԽ 2.
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0201 «ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

7. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

1) Կազմակերպությունների ղեկավարներին, գլխավոր կառավարիչներին, փաստաբաններին, ինչպես նաև իրավաբանության բարձր որակավորում ունեցող տարբեր մասնագետների օգնում է իրավաբանական գործերում:

2) Կազմել պայմանագրեր, այլ փաստաթղթեր:

3) Կատարել իրավաբանական ձևակերպումներ:

8. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտությամբ մասնագետի՝ զբաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են.

1) իրավաբանական և այդօրինակ այլ փաստաթղթեր ուսումնասիրելը կամ դրանց ուսումնասիրությունը կազմակերպելը,

2) իրավաբանական վիճակներ բնութագրող զեկուցագրեր պատրաստելը կամ ապահովագրության և վարկեր տրամադրելու պայմանները շարադրելը,

3) որոշակի գործերի առնչվող իրավաբանական կամ տեխնիկական հարցերով խորհրդատվություն մատուցելը հաճախորդներին կամ գործակալներին,

4) անշարժ գույքի փոխանցմանը, բաժնետոմսերին և այլ գործերի վերաբերող փաստաթղթեր պատրաստելը, որոնց համար պահանջվում է ձևական գրանցում,

5) փաստաթղթերի օրինականությունն ստուգելը և դրանք ժամանակին կազմակերպության գրանցման գրասենյակներ առաքելը,

6) դատական և արբիտրաժային մարմիններին հանձնելու համար հայցային նյութեր կազմելը, դատական և արբիտրաժային գործեր հաշվառելը և պահպանելը,

7) տնտեսական պայմանագրերը և ֆինանսական գործարքներն իրավաբանորեն ձևակերպելը,

8) բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

ԳԼՈՒԽ 3.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0201 «ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

9. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) մասնագիտական գործունեության բնագավառի կարողություններն ու հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների յուրացում,

2) աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում աշխատանքային կոլեկտիվի անդամների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողության ձևավորում,

3) ինչպես տիպական, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում մասնագիտական հարցերի լուծումների տարբերակներ առաջարկելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորում,

4) մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը որոշակի սոցիալական և էթիկական հարցերի հետ որպես մեկ ամբողջություն դիտարկելու, ակտիվ քաղաքացիական գիտակցության դրսևորման կարողության ձևավորում,

5) մասնագիտական գործունեության գործառնությունները կիրառվող նորմաների սահմաններում իրականացնելու հմտությունների ձևավորում,

6) ինքնազարգացման և մասնագիտական կատարելագործման նպատակով իր և աշխատակիցների ուսումնառության կարիքները գնահատելու, դրանք իրագործելու ուղիներն առաջարկելու կարողության ձևավորում,
7) մասնագիտական և ընդհանուր բնույթի տեղեկատվության գոյություն ունեցող աղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու կարողության ձևավորում,
8) աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպելու, խմբի անդամներին ուղղորդելու, նրանց անհատական հնարավորությունները գնահատելու և արդյունավետ օգտագործելու հմտությունների զարգացում,
9) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողությունների ձևավորում:

ԳԼՈՒԽ 4.

ՊԱՀԱՆՋՆԵՐ 0201 «ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

10. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) իմանալ ՀՀ Սահմանադրության, տվյալ բնագավառի աշխատանքները, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,
2) տիրապետել հայոց լեզվին,
3) հաղորդակցվել երկու օտար լեզուներով,
4) պատկերացում ունենալ առողջ կենսակերպի մասին, տիրապետել ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
5) դրսևորել ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,
6) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին,
7) իմանալ հոգեբանության, միջանձնային փոխհարաբերությունների վարվելակերպի տարրերը,
8) իմանալ տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:

11. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) ծանոթ լինել էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրներին,
2) պատկերացում ունենալ արտակարգ իրավիճակների մասին, տիրապետել արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին, ծանոթ լինել փրկարարական աշխատանքների կազմակերպման կառույցներին և փրկարարական տեխնիկային, կարողանալ օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը պետք է ըստ աղյուսակ 1-ում բերված մոդուլների ապահովի շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետում:

13. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ըստ աղյուսակ 2-ում բերված մոդուլների ապահովի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերում:

ԳԼՈՒԽ 5.

ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0201 «ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

14. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտությամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողները:

2) Հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ: Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն: Հատուկ մասնագիտական դասընթացները պարապող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

3) Ուումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը կարող է ունենալ ինչպես բարձրագույն մասնագիտական, այնպես էլ միջին մասնագիտական կրթություն, մասնագիտական աշխատանքի փորձ: Առանձին մասնագիտությունների գծով ուսումնական պրակտիկան կամ նրա որոշակի մասերը կարող է վարել նաև արհեստագործական կրթություն և բավարար մասնագիտական որակավորում ունեցող արհեստավորը:

4) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովված լինի ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա), ինչն, ըստ բովանդակության պետք է համապատասխանի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների լրիվ ցանկին: Այդ առարկաների և մոդուլների, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր ձևերի գծով (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքերի) պետք է առկա լինեն դասագրքեր, ուսումնամեթոդական, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցեր, գործնական խաղերի սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ, մեթոդական մշակումներ, ցուցումներ, երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

16. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա.հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների,

բ.օտար լեզվի,

գ. ընդհանուր հումանիտար առարկաների,

դ. անվտանգության և առաջին օգնության,

ե. անհատական համակարգիչների,

զ. իրավագիտության և իրավագետի գործնական հմտությունների:

2) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանցանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները:

2) Ուսումնառության ընթացքում ուսանողի բեռնվածությունը պարտադիր լսարանային պարապմունքներով չպետք է գերազանցի շաբաթական 36 ժամը, ինչը նաև ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալն է, ընդ որում՝ նշված ծավալը չի ներառում նախասիրական առարկաների պարապմունքները, խորհրդատվությունները և լրացուցիչ արտալսարանային պարապմունքները:

3) Ուսումնական խմբի համար սահմանվում են խորհրդատվության ժամեր յուրաքանչյուր ուսումնական տարում մինչև 100 ժամ:

4) Ուսումնական տարվա սկիզբը և ավարտը բոլոր կուրսերում որոշվում է ուսումնական պլաններով:

5) Նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (ոչ ավել, քան շաբաթական 4 ժամ՝ առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

6) Հեռակա ձևով ուսուցման դեպքում ուսումնական տարվա ընթացքում դասախոսների հետ ուսանողների պարապմունքների ծավալը պետք է կազմի ոչ պակաս, քան 160 ժամ:

18. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները:

2) Պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով:

3) Պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները:

4) Պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները:

5) Ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական, ուսումնա-արտադրական արհեստանոցներում, ուսումնական տնտեսություններում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում :

6) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով անց է կացվում ուսանողների միջանկյալ ատեստավորում, իսկ որակավորում շնորհելու համար՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորում:

2) Միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել ինչպես ուսումնական կիսամյակի ընթացքում այնպես էլ վերջում:

3) Ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին:

4) Միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից:

5) Շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով:

6) Պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա համոզվել սույն չափորոշչով 0201 «Իրավագիտություն» մասնագիտությամբ մասնագետի համար սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանության մեջ:

ԳԼՈՒԽ 6.
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0201 «ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացվում է համաձայն աղյուսակ 3-ում բերված օրինակելի ուսումնական պլանի.

21. Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը օրինակելի ուսումնական պլանը կիրառելիս՝

1) սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմում և հաստատում է աշխատանքային ուսումնական պլանը,

2) աշխատանքային ուսումնական պլանը կազմելիս կարող է մինչև 5% չափով փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը,

3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը 15%-ի սահմաններում՝ չփոփոխելով արդյունքները և կատարման չափանիշները,

4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

7) ընտրում է շրջանավարտների՝ սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը:

Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության
հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՀՀ 4-09-001
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է իրավագետ որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Սահմանել ուսումնառության անձնական նպատակները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները, բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները
Ուսումնառության արդյունք 2	Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին
Կատարման չափանիշներ	ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք, բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ, գ. տեղեկատվության առանձնացում /խմբավորումը կատարում է նպատակային, դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը
Ուսումնառության արդյունք 3	Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, (պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը), բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները, գ. ցուցաբերում է համոզելու կարողություն, դ.կատարում է ճիշտ ամփոփում /եզրափակում
Ուսումնառության արդյունք 4	Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները, բ.ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները. գ.մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք
Ուսումնառության արդյունք 5	Կատարել փաստաթղթավորում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության, բ.ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը, գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԹԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ԸԱՀ 4-09-002
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքեր աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:

Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները. բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի ընդունվելու և ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները. գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV). դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:
Ուսումնառության արդյունք 2	Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները. բ. ճիշտ է ներկայացնում գործերընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ. գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության զգացման դրսևերումներ. դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:
Ուսումնառության արդյունք 3	Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և այդտեղ կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները. բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները, թիմային խնդիրների լուծման մեթոդները, գ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին: դ. ճիշտ վերաբերմունք է դրսևորում կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ. ե. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում. զ. գիտի և պահպանում է իրավաբանի, փաստաբանի մասնագիտական էթիկայի սկզբունքները:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ ել ղեկավարի հետ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում աշխատանքի հաճախման և ճշտապահության կարևորությունը, բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները, գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:
Ուսումնառության արդյունք 5	Դրսևորել քննադատական մտածողություն:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը. բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետ համադրում է առկա գիտելիքների հետ. գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:
Ուսումնառության արդյունք 6	Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները. բ. ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան). գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները: դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում, ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը. զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները. է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է տալ դրանց արագ ու արդյունավետ լուծումներ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱԱՕ 04-08-001
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել արտադրական կազմակերպություններում աշխատանքային անվտանգության պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:

Մոդուլի տևողությունը	34 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը. բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը. գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը. դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները: ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը. զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները. բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը. գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները. դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները. բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները. գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները. դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը. բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը. գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ. դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները. ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը. զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՑՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	SS 3 - 08 – 001
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսում է տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում
Մոդուլի գնահատման կարգը	մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
Ուսումնառության արդյունք 1	WORD ծրագիր (հիմնական տեղեկություններ
Կատարման չափանիշներ	ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը

	բ. բացել նոր փաստաթուղթ գ. ստեղնաշարի օգնությամբ մուտքագրել տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում զ. փակել փաստաթուղթը է. բացել առկա փաստաթուղթը ը. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները
Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի տարրական ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար բ. նշել բառերը և տեքստային հատվածները գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ դ. կատարել տողերի հավասարեցում ե. փոխել միջտողային տարածությունները զ. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով է. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով ը. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից թ. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները ժ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները ժա.կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը ժբ.մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ, ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը, ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ ժգ. պատճենել տեքստը ժդ. տեղափոխել տեքստը ժե. տողադարձել տեքստը ժզ. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով
Ուսումնառության արդյունք 3	Փաստաթղթի պահպանում
Կատարման չափանիշներ	ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը, բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը, գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:
Ուսումնառության արդյունք 4	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
Կատարման չափանիշներ	ա. պատրաստել աղյուսակ, բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ, գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ, դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ, ե. ջնջել աղյուսակի տողերը և սյուները, զ. փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ, է. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ, ը. փոխել աղյուսակի գծերի գույնը, թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը:
Ուսումնառության արդյունք 5	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
Կատարման չափանիշներ	ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ, բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, գ. գծագրել կանոնավոր պատկերներ,

	դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով, շրջելով, չափերը փոխելով, ե. խմբավորել գրաֆիկական օբյեկտները, զ. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ, է. գծագրել տեքստային բլոկներ, ը. գունավորել գրաֆիկական օբյեկտները, թ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները, ժ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները
Ուսումնառության արդյունք 6	Փաստաթղթի տպագրում
Կատարման չափանիշներ	ա. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը, բ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները, գ. տպագրել փաստաթուղթը
Ուսումնառության արդյունք 7	Ինտերնետում աշխատելու իմացություն
Կատարման չափանիշներ	ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը, բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը, գ. իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը, դ. իմանալ History հրամանի նշանակությունը, ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը, զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը, է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը, ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը, թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից, ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից, ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները, ժբ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա, ժգ. ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից, ժդ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակություն, ժե. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԳՐԾ 04-09-002
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ՀՀ օրենսդրության դրույթների և գործավարության հիմունքների համաձայն՝ գործավարության, փաստաթղթերի, գործավարական աշխատանքի, գործավարությունում փաստաթղթերի հետ աշխատանքի կազմակերպման, փաստաթղթերի կատարման հսկողության, փաստաթղթերի ընթացիկ պահպանության կազմակերպման կարողություններ: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կսովորի փաստաթղթային գործավարություն, կկարողանա կազմակերպել գործավարական աշխատանքը, գործավարությունում իրավական փաստաթղթերի հետ աշխատանքը, փաստաթղթերի կատարման հսկողությունը, փաստաթղթերի ընթացիկ պահպանությունը, ընդհանուր գործավարությունը կկարողանա կիրառել մասնագիտական գործունեության մեջ:
Մոդուլի տևողությունը	34 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
Ուսումնառության արդյունք 1	Տիրապետում է գործավարության հիմունքներին և փաստաթղթերի ձևավորման ընդհանուր կանոններին.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում գործավարության գործունեության բնագավառը. բ. ճիշտ է ներկայացնում փաստաթղթային ապահովման նորմերը. գ. ճիշտ է կարողանում ներկայացնել փաստաթղթի տվյալների զետեղման սխեմատիկ կառուցվածքը.

	դ. ճիշտ է ձևակերպում փաստաթղթի տվյալները՝ ըստ պատշաճ պահանջների. ե. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի հաստատման եղանակները. զ. ճիշտ է վերնագրում փաստաթղթերի տեքստերը և կարողանում է ձևավորել տեքստը. է. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի համաձայնեցման նշագրումները (վիզաները). ը. տիրապետում է փաստաթղթի պատճենի վավերականացման վերաբերյալ նշման կարգին. թ. տիրապետում է փաստաթղթերի կատարողի (կազմողի) վերաբերյալ նշման կարգին:
Ուսումնառության արդյունք 2	Տիրապետում է փաստաթղթերի միօրինականացված համակարգի հմտություններին:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի միօրինականացման համակարգը. բ. մշակում է կազմակերպական և կարգադրական փաստաթղթեր. գ. մշակում է հաղորդատեղեկատվական փաստաթղթեր. դ. կազմում է տեղեկանք, զեկուցագիր, բացատրագիր, ակտ. ե. կազմում է առաջարկություններ և դիմումներ:
Ուսումնառության արդյունք 3	Կազմակերպում է գործավարությունում փաստաթղթերի հետ աշխատանքը:
Կատարման չափանիշներ	ա. կարող է կազմակերպել փաստաթղթաշրջանառությունը. բ. կատարում է մուտքագրում՝ ըստ փաստաթղթերի ընդունման կարգի. գ. կատարում է փաստաթղթերի առաքում՝ ըստ ելից փաստաթղթերի առաքման կարգի. դ..կատարում է փաստաթղթերի քանակի հաշվառում. ե. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի գրանցման ձևերն ու դրանց լրացման կարգը, կարողանում է կատարել փաստաթղթերի գրանցում:
Ուսումնառության արդյունք 4	Իրականացնում է փաստաթղթերի կատարման հսկողություն:
Կատարման չափանիշներ	ա. իրականացնում է փաստաթղթերի կատարման ըստ էության հսկողություն. բ. իրականացնում է փաստաթղթերի կատարման ժամկետների հսկողություն. գ. իրականացնում է փաստաթղթերի կատարման համակարգչային հսկողություն:
Ուսումնառության արդյունք 5	Կազմակերպում է գործավարական աշխատանքը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում գործավարական աշխատանքի կազմակերպման ընդհանուր պահանջները. բ. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի հետ աշխատանքի կազմակերպական ձևերը. գ. ճիշտ է ներկայացնում գործավարության կազմակերպման կառուցվածքները: դ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները
Ուսումնառության արդյունք 6	Կազմակերպում է փաստաթղթերի ընթացիկ պահպանությունը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում գործերի անվանակարգի տեսակները: բ. կարողանում կազմել գործերի անվանակարգ. գ. մշակում է գործերի անվանակարգ. դ. կազմում է գործերի վերնագրերը. ե. ճիշտ է որոշում գործերի պահպանման ժամկետները. զ. ճիշտ է համարակալում (ինդեքսավորում) է գործերը. է. կատարում է էլեկտրոնային փաստաթղթերի պահպանում՝ ըստ կարգի:
Ուսումնառության արդյունք 7	Նախապատրաստում է փաստաթղթերը արխիվ հանձնելու համար և տիրապետում է արխիվային փաստաթղթերի օգտագործման կարգին:
Կատարման չափանիշներ	ա. կատարում է փաստաթղթերի արժեքավորման փորձաքննություն՝ ըստ փաստաթղթերի փորձագիտական արժեքավորման չափանիշների. բ. նախապատրաստում (ձևավորում) է գործերը հետագա պահպանման համար և կարողանում է կազմել գործերի ցուցակներ. գ. հանձնում է գործերը արխիվ՝ ըստ սահմանված կարգի. դ. կատարում է էլեկտրոնային փաստաթղթերի արխիվային պահպանում. ե. կարող է կազմել և տրամադրել արխիվային տեղեկանք՝ ըստ պատշաճ կարգի. զ. կազմում է արխիվային պատճեն և արխիվային քաղվածք:

Աղյուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 0201 «Իրավագիտություն» մասնագիտության
հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-001
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին իրավական նախնական և ներածական գիտելիքներ հաղորդելու համար: Մոդուլի նպատակն է սովորողին հաղորդել գիտելիքեր պետության և իրավունքի ծագման, գործողության, զարգացման հիմնական և ընդհանուր օրինաչափությունների վերաբերյալ, սովորեցնել իրավաբանական լեզուն և հիմնարար հասկացությունները, և դրանով իսկ նախապատրաստել նրան մնացած իրավական դասընթացները յուրացնելու համար, ինչպես նաև ձևավորել նախնական ընդհանուր մասնագիտական արհեստավարժություն, իրավական աշխարհայացք և իավական մշակույթ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ պետության և իրավունքի հիմնական օրինաչափությունները և կատեգորիաները:
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է բնորոշել պետության հասկացությունը, ներկայացնել նրա հատկանիշները, դերը և արտաքին ու ներքին գործառույթները, նկարագրում է պետության կառուցակարգը և հիմնավորում էիշխանությունների բաժանման սկզբունքի անհրաժեշտությունը. բ. տարբերում է պետության ձևի բաղադարատարրերը, հատկապես պետական կառավարման հանրապետական և միապետական ձևերը. գ. ճիշտ բնորոշում է իրավունք հասկացությունը, վերլուծում իրավունքի հատկանիշները, թվարկում է իրավունքի սկզբունքները, բացատրում դրանց բովանդակությունը և տեսագործնական նշանակությունը. դ. գիտի թե ինչ է իրավունքի նորմը, որոնք են դրա կառուցվածքային մասերը և ինչ դեր են խաղում դրանցից յուրաքանչյուրը իրավական կարգավորման համակարգում:
Ուսումնառության արդյունք 2	Տարբերել իրավունքի ձևերը և իրավունքի համակարգի կառուցվածքային մասերը:
Կատարման չափանիշներ	ա. տարբերի իրավունքի ձևերի (աղբյուրների) տեսակները, հասկանա դրանց աստիճանակարգությունը և գործնական նշանակությունը ՀՀ իրավական համակարգում, բ. գիտի թե ինչ տեղ է գրավում նորմատիվ իրավական ակտը իրավունքի ձևերի համակարգում, կարող է օգտվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքից, գ. տարբերում է իրավունքի համակարգի կառուցվածքային մասերը, հատկապես իրավունքի ճյուղերը և դրանց բաժանման չափանիշները, դ. թվարկում է ՀՀ իրավունքի համակարգի հիմնական ճյուղերը և նկարագրում է դրանցից ամեն մեկի կարգավորման առարկան:
Ուսումնառության արդյունք 3	Պատկերացնել իրավական կարգավորման կառուցակարգը, վերջինիս բաղադրատարրերը:
Կատարման չափանիշներ	ա. պատկերացնում է հասարակական կյանքում իրավական կարգավորման և իրավական ազդեցության տարբերությունը. բ. նկարագրում է իրավական կարգավորման կառուցակարգը (մեխանիզմը)՝ թվարկելով դրա հիմնական տարրերը գ. կարող է կազմել իրավական կարգավորման կառուցակարգի փուլերի սխեման և բացատրել այդ: դ. վեր է հանում այն դերը և նշանակությունը, որ կատարում են իրավագիտակցությունը և իրավական մշակույթը իրավական կարգավորման կառուցակարգում:
Ուսումնառության արդյունք 4	Տիրապետի իրավաստեղծագործության, դրա տեխնիկայի և նորմատիվ իրավական ակտերի համակարգման հիմունքներին, իրավական տեքստերի մեկնաբանման կանոններին, հնարքներին.
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է բացատրել, թե ինչ է իրավաստեղծագործությունը, թվարկել դրա տեսակները և սկզբունքները. բ. գիտի թե որոնք են օրնաստեղծագործության հիմնական փուլերը և կարողանում է բացատրել դրանցից ամեն մեկի էությունը. գ. տարբերում է նորմատիվ ակտերի համակարգման տեսակները, և տիրապետում է իրավաբանական /օրենսդրական/ տեխնիկայի կանոններին «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի մակարդակով.

	դ. բացատրում է իրավունքի նորմերի մեկնաբանման հասկացությունը, անհրաժեշտությունը և գործառույթները, տարբերում է մեկնաբանման տեսակները, ե. ծանոթ է իրավունքի նորմերի մեկնաբանման լեզվաբանական, տրամաբանական, համակարգային, նպատակային, հատուկ-իրավաբանական, գործառույթային հնարքներին:
Ուսումնառության արդյունք 5	Տիրապետում է մասնագիտական արհեստավարժության հիմունքներին.
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է ճիշտ վերլուծել պետահիրավական երևույթները. բ. տարբերում է իրավունքի նորմերի կենսագործման անմիջական և միջնորդավորված ձերը. գ. ունի տեսական գիտելիքների կիրառման հմտություն, այսինքն՝ գիտի իրավունքի կիրառման փուլերը և կարող է դրան համապատասխան լուծել իրավական գործնական խնդիրներ. դ. կարողանում է ճիշտ վերլուծել իրավական նշանակության փաստերը, ընտրել համապատասխան օրենքի նորմերը և կայացնել որոշում:
Ուսումնառության արդյունք 6	Տարբերում է իրավաչափ և իրավախախտ վարքագիծը, պատկերացնում իրավաբանական պատասխանատվությունը և դրա նշանակությունը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ ներկայացնում է իրավաչափ վարգագիծը և դրա տեսակները ըստ սոցիալական նշանակության, ըստ սոցիալական շարժառիթների. բ. կարողանում է ճիշտ բնորոշել իրավախախտումը, վերլուծել դրա հատկանիշները, ինչպես նաև իրավախախտման իրավաբանական կազմի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները. գ. տարբերում է հանցագործությունները և զանցանքները, զանցանքների տեսակները. քաղաքացիական, վարչական, կարգապահական, դատավարական. դ. տարբերում է իրավական պատասխանատվությունը պետական հարկադրանքի այլ տեսակներից, գիտի թե որոնք են իրավական պատասխանատվության հիմքերը, նպատակները և գործառույթները. ե. թվարկում է իրավական պատասխանատվության սկզբունքները և բացատրում դրանցից ամեն մեկի նշանակությունը:
Ուսումնառության արդյունք 7	Տիրապետում է իրավագիտական լեզվին և եզրույթաբանությանը, դրսևորում է իրավական աշխարհայացք, մասնագիտական իրավական մշակույթ.
Կատարման չափանիշներ	ա. խոսքը կառուցում է իրավաբանորեն ճիշտ և գրագետ՝ պահպանելով իրավական տրամաբանության կանոները. բ. ճիշտ է օգտագործում իրավաբանական հասկացությունները և եզրույթները, գիտի դրանց իրավական իմաստը. գ. դրսևորում է իրավական աշխարհայացք հասարակական երևույթների գնահատման գործընթացում. դ. ունի իրավական մշակույթ, այսինքն՝ դրսևորում է իրավաչափ վարքագիծ իրավական տեսանկյունից սահմանային իրավիճակներում:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-002
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին սովորեցնելու սահմանադրական իրավունքի կարգավորման առարկան, աղբյուրները, ՀՀ Սահմանադրությունը, սահմանադրական կարգի հիմունքները, ընտրական համակարգի, ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգը, առանձին տեսակի մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
Ուսումնառության արդյունք 1	Սահմանում է սահմանադրական իրավունքի կարգավորման առարկան, թվարկի դրա հիմնական աղբյուրները:
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է բնորոշել սահմանադրական իրավունքի կարգավորման առարկան և բնութագրել դրա տեղը ՀՀ իրավունքի համակարգում. բ. թվարկում է սահամանադրական իրավունքի աղբյուրները՝ ըստ իրավաբանական ուժի. գ. գիտի թե ինչ է սահմանադրությունը, ինչպես է ընդունվում և փոփոխվում այն, ինչ կառուցվածք ունի ՀՀ Սահմանադրությունը.
Ուսումնառության արդյունք 2	Բնութագրում է սահմանադրական կարգի հիմունքները և թվարկի ու բացատրի դրա սկզբունքները:

Կատարման չափանիշներ	ա. սահմանում է սահմանադրական կարգի հիմունքների հասկացությունը և այդ ինստիտուտի նշանակությունը սահմանադրական իրավունքի համակարգում. բ. դասակարգում է սահմանադրական կարգի հիմունքները /սկզբունքները/ և ներկայացնում է դրանց բովանդակությունը. գ. սահմանում է ՀՀ որպես պետության սահմանադրական բնութագրիչները. դ. բացատրում է քաղաքացիական հասարակությանը վերաբերող սահմանադրական կարգի հիմունքները:
Ուսումնառության արդյունք 3	Սահմանում է ընտրական իրավունքի հասկացությունը և ներկայացնում է ՀՀ ընտրական օրենսգիքը:
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է ընտրական իրավունք հասկացությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստներով. բ. թվարկում և բացատրում է ընտրական իրավունքի սկզբունքները. գ. ներկայացնում է ՀՀ ընտրական օրենսգրքի կառուցվածքը. դ. թվարկում և ներկայացնում է ընտրական գործընթացի փուլերը:
Ուսումնառության արդյունք 4	Իմանում է ՀՀ նախագահի ընտրության և իրավական կարգավիճակի սահմանադրական հիմունքները:
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է ՀՀ նախագահի որպես պետության գլխի գործառույթները. բ. ներկայացնում է ՀՀ նախագահի ընտրության կարգը. գ. ներկայացնում է ՀՀ նախագահի լիազորությունների դադարման հիքերը և կարգը. դ. թվարկում է ՀՀ նախագահի լիազորությունները նրա իրավասության առանձին ոլորտներում. ե. իմանում է ՀՀ նախագահի ընդունած ակտերը և բնութագրի դրանց տեղը նորմատիվ իրավական ակտերի համակարգում:
Ուսումնառության արդյունք 5	Իմանում է ՀՀ Ազգային ժողովի կազմավորման կարգի և իրավասության սահմանադրական հիմունքները:
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է օրենսդիր իշխանության տեղը և դերը իշխանությունների տարանջատման համակարգում. բ. ներկայացնում է ՀՀ ազգային ժողովի ընտրության կարգը. գ. իմանում է ՀՀ ազգաին ժողովի կառուցվածքը, պատգամավորների իրավական կարագավիճակի առանձնահատկությունները. դ. թվարկում է ՀՀ ազգային ժողովի լիազորությունները նրա իրավասության առանձին ոլորտներում. ե. բնութագրում է օրենսդրական գործընթացը, թվարկում և նկարագրում է դրա փուլերը:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնում է ՀՀ կառավարության կազմավորման կարգը և իրավասության հիմնական բովանդակությունը:
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է կառավարության տեղը պետական մարմինների համակարգում. բ. ներկայացնում է կառավարության ձևավորման կարգը և լիազորությունների դադարման հիմքերը և կարգը. գ. ներկայացնում է կառավարության պատասխանատվությունը օրենդիր իշխանության առջև. դ. թվարկում է կառավարության լիազորությունները նրա իրավասության առանձին ոլորտներում:
Ուսումնառության արդյունք 7	Բնութագրում է պետական տեղական կառավարման և տեղական ինքնակառավարման սահմանադրական կարգավորման իրավական հիմունքները:
Կատարման չափանիշներ	ա. տարբերում է տեղական պետական կառավարումը և տեղական ինքնակառավարումը. բ. ներկայացնում է տեղական պետական կառավարման սահմանադրական հիքերը, մարզերի և մարզպետարանների կարգավիճակը. գ. բնութագրում է տեղական ինքանակառավարման համակարգի հիմնական սկզբունքները. դ. բացատրում է համայնքների իրավական կարագավիճակը. ե. ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման սահմանադրական հիմունքները, նրանց իրավասության հիմնական բովանդակությունը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-003
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին սովորեցնելու մարդու իրավուքնների հիմունքները, այսինքն՝ մարդու իրավունքների էությունը և դասակարգումը, մարդու անձնական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքները և ազատությունները, առանձին կատեգորիայի /երեխաների, կանանց, ազգային փոքրամասնությունների, փախստականների, կրոնական փոքրամասնությունների, հաշմանդամների և այլն անձանց իրավունքները, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային-իրավական միջոցները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի

	տեսության հիմունքներ» և ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
Ուսումնառության արդյունք 1	Սահմանում է մարդու իրավունքների հասկացությունը, բացատրում է դրա իրավական բնույթը, գերակայությունը և համընդհանրությունը.
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է մարդու իրավունքները, բացատրում դրա բնական, բարոյական, փիլիսոփայական հիմքերը. բ. ներկայացնում է մարդու իրավունքների իրավական բնույթը, դրա կարգավորման անհրաժեշտությունը և կարգավորման բովանդակությունը. գ. ներկայացնում է մարդու իրավուքների գերակայությունը, հիմնարար բնույթը, ինչպես նաև իրականացման սահմանները, դ. բնութագրում է մարդու իրավունքների սահմանափակումը, դրա անհրաժեշտությունը, սահմանափակման եղանակները. ե. հստակ նշում է պետության պարտականությունները մարդու իրավունքների ոլորտում:
Ուսումնառության արդյունք 2	Թվարկում է մարդու իրավունքների ներպետական և միջազգային իրավական աղբյուրները:
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է ՀՀ Սահմանադրությունը որպես մարդու իրավունքների աղբյուր և բացատրում է մարդու իրավունքների սահմանադրական սկզբունքները. բ. բացատրում է մարդու իրավունքների միջազգայանացումը. գ. թվարկում է մարդու իրավունքների համընդհանուր, տարածաշրջանային և հատուկ միջազգային հիմնական փաստաթղթերը:
Ուսումնառության արդյունք 3	Սահմանում է քաղաքացու հասկացությունը և ներկայացնում է քաղաքացիության ինստիտուտի բովանդակությունը:
Կատարման չափանիշներ	ա. տարբերում է քաղաքացի հասկացության իրավական և բարոյական իմաստները. բ. ներկայացնում է քաղաքացիության սահմանադրական հիմունքները. գ. թվարկում է քաղաքացիության ձեռք բերման հիմքերը. դ. թվարկում է քաղաքացիության դադարման հիմքերը. ե. ներկայացնում է քաղաքացիության հարցերի լուծման կարգը:
Ուսումնառության արդյունք 4	Թվարկում և բացատրում է մարդու անձնական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքները.
Կատարման չափանիշներ	ա. թվարկում և բացատրում է մարդու անձնական իրավունքները. բ. թվարկում և բացատրում է մարդու քաղաքական իրավունքները. գ. թվարկում և բացատրում է մարդու տնտեսական իրավունքները. դ. թվարկում և բացատրում է մարդու սոցիալական իրավունքները. ե. թվարկում և բացատրում է մշակութային իրավունքները. զ. թվարկում և բացատրում է մարդու և քաղաքացու սահմանադրական պարտականությունները. է. թվարկում է առանձին խմբերի անձանձ իրավական կարգավիճակի առանձնահատկությունները:
Ուսումնառության արդյունք 5	Բնութագրում է մարդու իրավունքների երաշխիքները.
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է մարդու իրավունքերի երաշխիքների հասկացությունը. բ. թվարկում է և բացատրում մարդու իրավունքների ընդհանուր երաշխիքները. գ. թվարկում է մարդու իրավուքների սահմանադրական ընդհանուր երաշխիքները. դ. բացատրում է մարդու իրավունքերի դատական պաշտպանության բովանդակությունը և ներկայացնում ՀՀ սահմանադրական դատարանի դերը այդ գործում. ե. ներկայացնում է մարդու իրավունքների պաշտպանի կարգավիճակը, նրա գործունեության իրավական ձևերը զ. թվարկում է մարդու իրավուքների սահմանադրական հատուկ երաշխիքները:
Ուսումնառության արդյունք 6	Թվարկում է և բացատրում է մարդու իրավունքների ներպետական և միջազգային իրավական պաշտպանության համակարգը և ինստիտուտները:
Կատարման չափանիշներ	ա. տարբերում է մարդու իրավունքներ պաշտապանության միջազգային և ներպետական համակարգերը. բ. թվարկում է մարդու իրավունքների պաշտպանության համընդհանուր համակարգի հիմնական մարմինները և ինստիտուտները. գ. թվարկում է մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգի հիմնական մարմինները և ինստիտուտները. դ. կներկայացնում է մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիմելու հիքերը, պայմանները, կարգը, դիմումի ընդունելիության պայմանները, գործի քննության կարգը:

	ե. սահմանում է միջազգային մարդասիրական իրավունքի հասկացությունը, թվարկում հիմնական աղբյուրները, բացատրում հիմնական բովանդակությունը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-004
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին վարչական իրավունքի հասկացությունը, վարչաիրավական կարգավորման առարկան և մեթոդը, վարչական իրավունքի համակարգը, աղբյուրները, վարչական իրավունքի սուբյեկտները և դրանց իրավական կարգավիճակի առանձնահատկությունները, վարչաընթացակարգային իրավունքի հասկացությունը սովորեցնելու համար: Մոդուլը միաժամանակ նպատակ ունի սովորողներին հաղորդելու գիտելիքներ հասարակական կյանքի առանձին ոլորտների վարչական կառավարման հիմունքների վերաբերյալ: Մոդուլի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգիրքը և վարչական պատասխանատվության ենթարկելու կարգը:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ» և ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Սահմանում է վարչական իրավունքի կարգավորման առարկան, վարչաիրավական նորմերի հատկանիշները, վարչական իրավունքի աղբյուրները ըստ դրա համակարգի.
Կատարման չափանիշներ	ա. տիրապետում է վարչական իրավունքի հասկացությունների ապարատին, բնութագրում նրա կարգավորման առարկան. բ. թվարկում է վարչական իրավունքի հիմնական իստիտուտները և նկարագրում է դրանցից ամեն մեկի կարգավորման առարկան. գ. սահմանում է վարչական իրավունքի աղբյուների աստիճանակարգությունը, և կարող է մատնանշել վարչաիրավական կոնկրետ ինստիտուտների իրավական կարգավորման աղբյուրը:
Ուսումնառության արդյունք 2	Պետական ծառայության անցնելու օրենսդրական ընթացակարգին համապատասխան կարող է մասնակցել պետական ծառայության պաշտոնի համար մրցույթին
Կատարման չափանիշներ	ա. տիրապետում է պետական ծառայության վերաբերյալ օրենսդրության դրույթներին և կարող է մեկնաբանել դրա սկզբունքները. բ. տիրապետում է պետական ծառայության պաշտոնի համար մրցույթային կարգին. գ. կարողանում է մասնակցել պետական ծառայության պաշտոնի համար մրցույթին:
Ուսումնառության արդյունք 3	Տարբերում է վարչական իրավախախտումը այլ իրավախախտումներից.
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է ճիշտ բնորոշել վարչական իրավախախտումը, վերլուծել դրա հատկանիշները. բ. գիտի, թե որոնք են վարչական պատասխանատվության հիմքերը. գ. տարբերում է վարչական պատասխանատվությունը պատասխանատվության այլ տեսակներից:
Ուսումնառության արդյունք 4	Վերլուծում է վարչական իրավախախտման կազմը՝ ըստ «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի.
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է վարչական իրավախախտման իրավաբանական կազմի հասկացությունը և վեր հանում դրա առանձին կողմերը. բ. թվարկում է վարչական իրավախախտումների հիմնական տեսակային օբյեկտները. գ. կոնկրետ հոդվածից կարողանում է վեր հանել վարչական իրավախախտման սուբյեկտը, նրան բնորոշ պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները. դ. կոնկրետ հոդվածից կարողանում է վեր հանել վարչական իրավախախտման օբյեկտիվ կողմը, դրան բնորոշ պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները. ե. կոնկրետ հոդվածից կարողանում է վեր հանել վարչական իրավախախտման սուբյեկտիվ կողմը, դրան բնորոշ պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները:
Ուսումնառության արդյունք 5	Կարողանում է արագ կողմնորոշվել «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի կառուցվածքում և կատարել հանձնարարված փաստական դեպքի իրավական վերլուծություն և որակում.
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է կատարել հանձնարարված փաստական դեպքի՝ իրավախախտման կազմի վերլուծություն. բ. կարողանում է «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի կառուցվածքում արագ գտնել հատուկ մասի այն հոդվածը, որ նախատեսված է փաստական դեպքի համար.

	գ. կատարում է դեպքի՝ իրավախախտման հանգամանքների և հոդվածի համադրում, արդյունքում իրավական որակում:
Ուսումնառության արդյունք 6	Կազմում է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և տիրապետում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացակարգին:
Կատարման չափանիշներ	ա. տիրապետում է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջներին. բ. կարողանում է կազմել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն. գ. տիրապետում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացակարգին:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-005
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին սովորեցնել վարչական դատարանում և վճռաբեկ դատարանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը: Մոդուլի նպատակներից է նաև սովորողի մոտ ձևավորել գործնական հմտություններ վարչական դատավարությունում ներկայացուցչական գործառույթներ կատարելու համար:
Մոդուլի տևողությունը	48 ժամ
Մուտքային պահանջները	այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ» և ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք», ԻՐԳ 4-09-004 «Վարչական իրավունք» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բնութագրի վարչական դատավարության հասկացությունը, սկզբունքները, խնդիրները, աղբյուրները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում վարչական դատավարության հասկացությունը. բ. ճիշտ է սահմանում վարչական դատավարության խնդիրները. գ. թվարկում և բացատրում է վարչական դատավարության սկզբունքները. դ. գիտի վարչական դատավարության իրավական աղբյուրները:
Ուսումնառության արդյունք 2	Սահմանում է վարչական դատարանի ընդդատությունը, կազմը և ինքնաբացարկը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում վարչական դատարանի ընդդատությունը, պատկերացնում է վարչական գործերի շրջանակը. բ. ճիշտ է սահմանում վարչական գործերի միանձնյա քննության դեպքերը. գ. ճիշտ է սահմանում վարչական գործերի կոլեգիալ քննության դեպքերը. դ. կարողանում է բացահայտել դատավորի բացարկի և ինքնաբացարկի հիմքերը, հայտարարել բացարկ, նկարագրել դրա քննության կարգը:
Ուսումնառության արդյունք 3	Թվարկում է վարչական դատավարության մասնակիցներին, սահմանում նրանց լիազորությունները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է թվարկում վարչական դատավարության մասնակիցներին. բ. ճիշտ է սահմանում հայցվորի հասկացությունը, թվարկում նրա իրավունքներն ու պարտականությունները. գ. ճիշտ է սահմանում պատասխանողի հասկացությունը, թվարկում նրա իրավունքներն ու պարտականությունները. դ. ճիշտ է սահմանում վարչական դատավարությանը համահայցվորների և համապատասխանողների մասնակցությունը. ե. ճիշտ է սահմանում վարչական դատավարությանը երրորդ անձանց մասնակցությունը, զ. ճիշտ է սահմանում դատական իրավահաջորդության կարգը:
Ուսումնառության արդյունք 4	Կարողանում է կատարել ներկայացուցչություն վարչական դատավարությունում:
Կատարման չափանիշներ	ա. Սահմանում է ներկայացուցչի դերը և գործառույթները վարչական դատավարությունում. բ. գիտի ներկայացուցչի իրավունքները և պարտականությունները. գ. կարող է կազմել ներկայացուցչի գործունեության հետ կապված իրավական փաստաթղթերի փաթեթը. դ. ճիշտ կատարում է ներկայացուցչի գործողությունները դատարանում:
Ուսումնառության արդյունք 5	Թվարկի ապացույցների տեսակները վարչական դատավարությունում և բացատրի դրանք:

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ապացույցների հասկացությունը. բ. ճիշտ է թվարկում ապացույցների տեսակները. գ. կարողանում է ճիշտ ընտրել գործով անհրաժեշտ ապացույցները՝ ելնելով դրանց վերաբերելիության և թույլատրելիության կանոններից. դ. ճիշտ է նկարագրում ապացուցման բեռը. ե. ճիշտ սահմանում է ապացուցման կարիք չունեցող փաստերը:
Ուսումնառության արդյունք 6	Գիտի և պահպանում է դատավարական ժամկետները, ներկայացնում է դատական ծանուցման կարգը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է հասկանում և հաշվարկում դատավարական ժամկետները. գ . գիտի դատական ծախսերի կառուցվածքը և դրանց վճարման կարգը. դ. կարող է կազմել դատական ծանուցագիր. ե. ճիշտ է ներկայացնում պատշաճ դատական ծանուցման կարգը:
Ուսումնառության արդյունք 7	Նկարագրում է գործի քննության և լուծման կարգը վարչական դատարանում, ինչպես նաև վճռաբեկ դատարանում վարչական գործերի քննության հիմքերը և կարգը:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ ներկայացնում է գործի քննության ընթացակարգը վարչական դատարանում. բ. գիտի վարչական դատարանի դատական ակտերը և դրանց ուժի մեջ մտնելու ժամկետը. գ. ճիշտ թվարկում է վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց և վճռաբեկ բողոք բերելու հիմքերը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-006
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին հաղորդելու գիտելիքներ քրեական իրավունքի հասկացության, սկզբունքների, համակարգի, աղբյուրների, քրեական պատասխանատվության հիմքերի, հանցագործության և հանցակազմի հասկացության, տեսակների, հանցակազմի տարրերի, հանցագործության փուլերի, հանցակցության, քրեական պատիժների հասկացության և տեսակների, պատժի նշանակման կարգի, քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու կարգի, քրեական իրավունքի հատուկ մասի հասկացության, ընդհանուր բնութագրի, տնտեսական ոլորտի, հասարակական անվտանգության և հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործությունների իմացություն:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ», ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք» և ԻՐԳ 4-09-004 «Վարչական իրավունք» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Սահմանում է քրեական իրավունքի հասկացությունը, աղբյուրները, թվարկում և բացատրում է քրեական իրավունքի սկզբունքները:
Կատարման չափանիշներ	ա. տիրապետում է քրեական իրավունքի հասկացությունների ապարատին, բնութագրում նրա կարգավորման առարկան. բ. թվարկում է քրեական իրավունքի հիմնական իստիտուտները և նկարագրում է դրանցից ամեն մեկի կարգավորման առարկան. գ. կարողանում է ներկայացնել քրեական օրենսգրքի կառուցվածքը, բացատրել քրեական իրավունքի ընդհանուր և հատուկ մասերի հարաբերակցությունը. դ. տիրապետում է ժամանակի ընթացքում և տարածության մեջ քրեական օրենքի գործողության կանոներին:
Ուսումնառության արդյունք 2	Սահմանում է հանցագործության հասկացությունը և հատկանիշները, հանցագործության տեսակները, հանցագործության փուլերը,
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է ճիշտ բնորոշել հանցագործությունը, վերլուծել դրա հատկանիշները. բ. որոշում է հանցագործության տեսակը՝ ելնելով հատուկ մասի հոդվածի սանկցիայում նախատեսված քրեական պատժատեսակից. գ. որոշում է հանցագործության փուլը՝ հանցավոր կոնկրետ արարքների նկարագրությունից ելնելով:
Ուսումնառության արդյունք 3	Բացատրում է քրեական պատասխանատվության հիմքը, վերլուծում հանցակազմի տարրերը և նկարագրում դրանցից ամեն մեկի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները:
Կատարման չափանիշներ	ա. գիտի թե որն է քրեական պատասխանատվության հիմքը. բ. թվարկում և բացատրում է քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հիմքերը և կարգը. գ. սահմանում է հանցակազմի հասկացությունը և վեր հանում դրա առանձին կողմերը. դ. թվարկում է հանցագործությունների հիմնական տեսակային օբյեկտները.

	ե. կոնկրետ հոդվածից կարողանում է վեր հանել հանցագործության սուբյեկտը, նրան բնորոշ պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները. զ. կոնկրետ հոդվածից կարողանում է վեր հանել հանցանքի օբյեկտիվ կողմը, դրան բնորոշ պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները. է. կոնկրետ հոդվածից կարողանում է վեր հանել հանցանքի սուբյեկտիվ կողմը, դրան բնորոշ պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները:
Ուսումնառության արդյունք 4	Սահմանում է հանցակցության հասկացությունը և թվարկում է հանցակիցների տեսակները:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ սահմանում է հանցակցության հասկացությունը, թվարկում է հանցակիցների տեսակները. բ. հանցավոր խմբի կողմից կատարված կոնկրետ հանցանքի վրա մատնանշում է հանցանք կատարողին. գ. հանցավոր խմբի կողմից կատարված կոնկրետ հանցանքի վրա մատնանշում է հանցանք կազմակերպչին. դ. հանցավոր խմբի կողմից կատարված կոնկրետ հանցանքի վրա մատնանշում է դրդողին. ե. հանցավոր խմբի կողմից կատարված կոնկրետ հանցանքի վրա մատնանշում է օժանդակողին:
Ուսումնառության արդյունք 5	Սահմանում է քրեական պատժի հասկացությունը և թվարկում է դրա տեսակները, բացատրում պատիժների նշանակման կարգը:
Կատարման չափանիշներ	ա. մատնանշում է քրեական պատժի տարբերությունը իրավաբանական պատասխանատվության այլ տեսակներից. բ. թվարկում է քրեական պատիժների տեսակները, բացատրում դրանց կատարման կարգը. գ. կոնկրետ հանցավոր արարքում վեր է հանում պատասխանատվությունը մեղմացնող և խստացնող հանգամանքները. դ. բացատրում է պատիժների նշանակման սկզբունքները:
Ուսումնառության արդյունք 6	Կարողանում է արագ կողմնորոշվել քրեական օրենսգրքի կառուցվածքում և կատարել հանձնարարված փաստական դեպքի իրավական վերլուծություն և որակում
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է կատարել հանձնարարված փաստական դեպքի՝ հանցագործության կազմի վերլուծություն. բ. կարողանում է քրեական օրենսգրքի կառուցվածքում արագ գտնել հատուկ մասի այն հոդվածը, որը նախատեսված է այդ դեպքի համար. գ. կատարում է դեպքի՝ հանցագործության հանգամանքների և հոդվածի համադրում, արդյունքում իրավական որակում:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-007
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին քրեական դատավարության հիմնական դրույթները, դատավարության մասնակիցների հիմնական իրավունքները և պարտականությունները, դատավարության փուլերը, դատական քննության կարգը, սովորեցնելու համար: Մոդուլի գործնական նպատակներն են դատական նիստերի քարտուղարի, ինչպես նաև դատական կարգադրիչի հմտությունների ձևավորումը, ինչպես նաև քրեական գործով տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցչի հմտությունների ձևավորումը:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ», ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք», ԻՐԳ 4-09-003 «Մարդու իրավունքներ» և ԻՐԳ 4-09-006 «Քրեական իրավունք» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնում քրեական դատավարության հիմնական դրույթները.
Կատարման չափանիշներ	ա. բացատրում է քրեական դատավարության իրավունքի հիմնական հասկացությունները. բ. բնորոշում է քրեական դատավարության իրավունքը, թվարկում և նկարագրում դրա փուլերը. գ. թվարկում և բացատրում է քրեական դատավարության իրավունքի սկզբունքները. դ. թվարկում է քրեական դատավարության սուբյեկտներին և բացատրում նրանց կարգավիճակի առանձնահատկությունները. ե. ներկայացնում բացարկի ինստիտուտը:
Ուսումնառության արդյունք 2	Կարողանում է արագ կողմնորոշվել քրեական դատավարության օրենսգրքի կառուցվածքում և կատարել հանձնարարված փաստական դեպքի իրավական վերլուծություն և որակում

Կատարման չափանիշներ	ա. կարողանում է ներկայացնել քրեական դատավարության օրենսգիրքը և դրա կառուցվածքը. բ. կատարում է հանձնարարված փաստական դատավարական իրադրությունը կարգավորող նորմի որոնում և մեկնաբանություն.
Ուսումնառության արդյունք 3	Կարողանում է իրականացնել ներկայացուցչություն քրեական գործերով.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում քաղաքացիական հայցվորի և պատասխանողի կարգավիճակը քրեական դատավարությունում, նրանց իրավունքները և պարտականությունները. բ. ճիշտ է ներկայացնում քաղաքացիական հայցվորի և պատասխանողի ներկայացուցիչների կարգավիճակը քրեական դատավարությունում, ներկայացուցչության հիմքերը, պատրաստում է ներկայացուցչի լիազորագիր. գ. ճիշտ թվարկում և մեկնաբանում է քաղաքացիական հայցվորի և պատասխանողի ներկայացուցիչների իրավունքները և պարտականությունները. դ. ճիշտ է մշակում գործով դիրքորոշումը, ձևակերպում է այն դատարան ներկայացվող փաստաթղթում՝ ելնելով իր դատավարական դե- րից /քաղաքացիական հայցվոր կամ պատասխանող/:
Ուսումնառության արդյունք 4	Տիրապետում է դատական ծանուցման կարգին և դատական քննության կարգին.
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է դատական ծանուցագրի հասկացությունը, ներկայացնում է ծանուցագրի բովանդակությունը. բ. թվարկում և բացատրում է դատական քննության փուլերը. գ. ներկայացնում է դատական քննության ընդհանուր պայմանները. դ. ներկայացնում է դատական նիստի նախապատրաստական մասը. ե. ներկայացնում է դատաքննության կարգը. զ. ներկայացնում է դատական վիճաբանությունները և ամբաստանյալի վերջին խոսքը:
Ուսումնառության արդյունք 5	Կարողանում է կազմել դատական նիստի արձանագրություն.
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է դատական նիստերի քարտուղարի կարգավիճակը, թվարկում պարտականությունները. բ. ներկայացնում է դատական նիստի արձանագրության բովանդակությունը. գ. կարող է կազմել դատական նիստ արձանագրությունէ օրենքի բոլոր պահանջների պահպանմամբ. դ. ներկայացնում է քրեական գործով մասնակցող անձանց իրավունքները՝ կապված արձանագրության հետ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-008
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին սովորեցնել քաղաքացիական իրավունքի կարգավորման առարկան, հիմնական հասկացությունները, սուբյեկտները, քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտները, սեփականության իրավունքի հասկացությունը, սեփականության ձևերը և տեսակները, սեփականության իրավունքի ձեռք բերման և դադարման եղանակները, գործարքները և նրանց վավերության պայմանները, քաղաքացիական իրավունքում ժամկետները, ներկայացուցչությունը և հայցային վաղեմությունը, քաղաքացիական իրավունքների բովանդակությունը, դրանց իրացման և պաշտպանության ձևերը, քաղաքացիաիրավական պատասխանատվության տեսակները և այլ ինստիտուտները:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ», ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք», ԻՐԳ 4-09-004 «Վարչական իրավունք» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանում է քաղաքացիական իրավունքի հիմնական հասկացությունները և սահմանում է քաղաքացիական իրավունքը, դրա կարգավորման առարկան, սկզբունքները, սուբյեկտները.
Կատարման չափանիշներ	ա. բացատրում է քաղաքացիական իրավունքի հիմնական հասկացությունները. բ. բնորոշում է քաղաքացիական իրավունքը, դրա կարգավորման առարկան. գ. թվարկում և բացատրում է քաղաքացիական իրավունքի սկզբունքները. դ.. սահմանում է քաղաքացիները որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ. ե. բացատրում է քաղաքացու իրավունակությունը և գործունակությունը, թվարկում գործունակության տեսակները. զ. թվարկում է քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտները.

	է. սահմանում է սեփականության իրավունքի հասկացությունը, տարբերում է սեփականության ձևերը և տեսակները, թվարկում է սեփականության իրավունքի ձեռք բերման և դադարման եղանակները:
Ուսումնառության արդյունք 2	Իմանում է քաղաքացիական իրավունքի աղբյուրները, կարողանում արագ կողմնորոշվել քաղաքացիական օրենսգրքի կառուցվածքում՝ կատարելով հանձնարարված փաստական դեպքի իրավական վերլուծություն և որակում.
Կատարման չափանիշներ	ա. թվարկում է քաղաքացիական իրավունքի աղբյուրները. բ. ներկայացնում է քաղաքացիական օրենսգրքի կառուցվածքը, բացատրում դրա բաժինների և գլուխների հարաբերակցությունը. գ. ճիշտ է սահմանում ժամանակի ընթացքում և տարածության մեջ քաղաքացիական օրենքի գործողության կանոնները. դ. կարողանում է քաղաքացիական օրենսգրքի կառուցվածքում արագ գտնել այն նորմերը, որոնք նախատեսված են հանձնարարված կենսական դեպքի համար:
Ուսումնառության արդյունք 3	Սահմանում է իրավաբանական անձը որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ և տարբերում դրանց տեսակները.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում իրավաբանական անձ հասկացությունը և հատկանիշները. բ. տարբերում է իրավաբանական անձանց տեսակները, կատարում դրանց դասակարգում. գ. մատնանշում է տնտեսական ընկերակցությունների և տնտեսական ընկերությունների տեսակների տարբերությունները. դ. սահմանում է իրավաբանական անձի իրավասուբյեկտությունը, տարբերում իրավաբանական անձի մարմինը և իրավաբանական անձի ներկայացուցիչը. ե. կարողանում է ներկայացնել իրավաբանական անձի պարտադիր պետական գրանցման կարգը և իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթի բովանդակությունը. զ. կարող է բացատրել իրավաբանական անձի և նրա արտադրանքի անհատականացումը. է. ճիշտ է սահմանում իրավաբանական անձի լուծարումը և ներկայացնում լուծարման կարգը. ը. տարբերում է իրավաբանական անձի վերակազմակերպման եղանակները (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազ-մավորում):
Ուսումնառության արդյունք 4	Տիրապետում է քաղաքացիական իրավունքի գործարքներ, ներկայացուցչություն, հայցային վաղեմություն ինստիտուտների իրավական բովանդակությանը.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում գործարք հասկացությունը, դասակարգում դրա տեսակները. բ. ճիշտ է սահմանում գորրծարքների ձևերը, ներկայացնում ձևին ներկայացվող պահանջները և դրանց հետևանքները. գ. տարբերում վավեր և անվավեր գործարքները, անվավեր գործարքների տեսակները և դրանց հետևանքները. դ. ճիշտ է սահմանում ներկայացուցչություն ինստիտուտը, կարողանում է կազմել քաղաքացիական ներկայացուցչության լիազորագիր. ե. ճիշտ է սահամանում հայցային վաղեմություն հասկացությունը, տարբերում է դրա կասեցումը, ընդհատումը, վերականգնումը. զ. թվարկում է այն պահանջները, որոնց վրա հայցային վաղեմություն չի տարածվում:
Ուսումնառության արդյունք 5	Տիրապետում է պարտավորություններ քաղաքացիական-իրավական ինստիտուտի բովանդակությանը.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում պարտավորության հասկացությունը և ներկայացնում կողմերի կարգավիճակը. բ. դասակարգում է պարտավորությունները. գ. ճիշտ է ներկայացնում պարտավորությունների պատշաճ կատարումը, թվարկում պարտավորությունների կատարման ապահովման եղանակները. դ. ճիշտ է սահմանում պարտավորության խախտում հասկացությունը և թվարկում պարտավորությունները խախտելու համար պատասխանատվության միջոցները. ե. թվարկում է պարտավորությունների դադարման հիմքերը:
Ուսումնառության արդյունք 6	Տիրապետում է ժառանգական իրավունք ինստիտուտի բովանդակությանը.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում ժառանգական իրավունքի ընդհանուր դրույթները. բ. տարբերում է ժառանգությունն ըստ կտակի և օրենքի ինստիտուտները. գ. նկարագրում է ժառանգությունն ընդունելու, բաժանելու, պահպանելու, կառավարելու, ձևակերպելու կարգը. դ. ներկայացնում է ժառանգությունից հրաժարվելը և դրա կարգը. ե. սահմանում է գույքի առանձին տեսակների ժառանգության առանձնահատկությունները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»	

Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-009
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին քաղաքացիական դատավարության հիմնական դրույթները (ենթակայություն, ընդդատություն, հայց), դատական ապացուցում և ապացույցները, դատավարության մասնակիցների հիմնական իրավունքները և պարտականությունները, դատավարության փուլերը, դատական քննության կարգը, դատական որոշումների բողոքարկման, վերանայման և կատարողական վարույթի, դատական որոշումների, քաղաքացիական իրավունքների պաշտպանության ոչ դատական ձևերի (նոտարիատ, միջնորդ դատարան և արբիտրաժ) սովորեցնելու համար: Մոդուլի գործնական նապատակներն են դատական ներկայացուցչի և դատական նիստերի քարտուղարի, ինչպես նաև դատական կարգադրիչի հմտությունների ձևավորումը:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ», ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք» և ԻՐԳ 4-09-008 «Քաղաքացիական իրավունք» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնում է քաղաքացիական դատավարության հիմնական դրույթները:
Կատարման չափանիշներ	ա. բացատրում է քաղաքացիական դատավարության իրավունքի հիմնական հասկացությունները (ենթակայություն, ընդդատություն, հայց և այլն). բ. բնորոշում է քաղաքացիական դատավարության իրավունքը, թվարկում դրա փուլերը. գ. թվարկում և բացատրում է քաղաքացիական դատավարության իրավունքի սկզբունքները. դ. թվարկում է քաղաքացիական դատավարության սուբյեկտներին և բացատրում նրանց կարգավիճակի առանձնահատկությունները. ե. ներկայացնում է բացարկի ինստիտուտը:
Ուսումնառության արդյունք 2	Կարողանում է իրականացնել ներկայացուցչություն քաղաքացիական գործերով:
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է ներկայացուցիչների միջոցով քաղաքացիական գործերի վարման կարգը. բ. թվարկում է այն անձանց, ովքեր կարող են լինել ներկայացուցիչներ. գ. գիտի ներկայացուցչի լիազորությունները և կարողանում է իրականացնել նրա լիազորությունների ձևակերպում. դ. ելնելով իր դատավարական դերից և գործառույթից ճիշտ մշակում է գործով դիրքորոշումը, ձևակերպում է այն դատարան ներկայաց վող փաստաթղթում (հայցվորի համար հայցադիմումը, պատասխանողի համար գրավոր առարկությունները):
Ուսումնառության արդյունք 3	Տիրապետում է դատական ծանուցման կարգին և կարողանում է կազմել դատական նիստի արձանագրություն:
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է դատական ծանուցագրի հասկացությունը, ներկայացնում է ծանուցագրի բովանդակությունը. բ. սահմանում է դատական նիստերի քարտուղարի կարգավիճակը, թվարկում պարտականությունները. գ. ներկայացնում է դատական նիստի արձանագրության բովանդակությունը, կարող է կազմել արձանագրություն. դ. իմանում է գործով մասնակցող անձանց իրավունքները՝ կապված արձանագրության հետ:
Ուսումնառության արդյունք 4	Կարողանում է պատրաստել հայցադիմում և որոշել դրան կցվող փաստաթղթերի շրջանակը:
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է ճիշտ և հմուտ նախապատրաստել քաղաքացիական հայցադիմում. բ. ճիշտ է որոշում վեճի ուղղվածությունը, հայցապահանջը, հայցագինը. գ. կարողանում է ճիշտ որոշել հայցադիմումին կից փաստաթղթերի շրջանակը: դ. պատրաստում է դատարանին ուղղված միջնորդություն հայցի ապահովման համար:
Ուսումնառության արդյունք 5	Կարողանում է պատրաստել դիմումներ հատուկ հայցային և հատուկ վարույթների գործերով:
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է հատուկ հայցային և հատուկ վարույթների տեսակները. բ. ճիշտ է որոշում վարույթի տեսակը և դրանից ելնելով վեճի ուղղվածությունը. գ. օգտվելով քաղաքացիական դատավարության օրենսգրքից կարողանում է ճիշտ նախապատրաստել դիմում այդ գործերով:
Ուսումնառության արդյունք 6	Կարողանում է պատրաստել վերաքննիչ և վճռաբեկ բողոք քաղաքացիական գործով:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ ներկայացնում է գործի քննության ընթացակարգը վերաքննիչ դատարանում. բ. ճիշտ թվարկում է վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց և վճռաբեկ բողոք բերելու հիմքերը. գ. կարողանում է պատրաստել վերաքննիչ և վճռաբեկ բողոք. դ. սահմանում է կատարողական վարույթի հիմնական դրույթները:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-010
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին սովորեցնել ՀՀ աշխատանքային օրենսդրության դրույթները և ձևավորել կարողություններ աշխատանքային օրենսդրության և դրանով կարգավորվող հարաբերությունների, կոլեկտիվ և անհատական աշխատանքային պայմանագրերի կազման, աշխատաժամանակի, հանգստի ժամանակի, աշխատավարձի, աշխատանքային կարգապահության, աշխատանքային վեճերի լուծման աշխատանքային օրենսդրության նորմերի մեկնաբանման վերաբերյալ: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կկարողանա կազմել կոլեկտիվ և անհատական աշխատանքային պայմանագրեր:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ», ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք» և ԻՐԳ 4-09-008 «Քաղաքացիական իրավունք» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կարողանում է ներկայացնել աշխատանքային օրենսգրքով կարգավորվող հարաբերությունները և աշխատանքային հարաբերությունների սուբյեկտներին, մեկնաբանել աշխատանքային օրենսդրության նորմերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կարողանում ներկայացնել աշխատանքային օրենսդրության նպատակն ու սկզբունքները. բ. ճիշտ է կարողանում ներկայացնել աշխատանքային օրենսդրության փաստաթղթային ապահովման նորմերը. գ.ճիշտ է կարողանում ներկայացնել աշխատանքային օրենսդրության նորմերի մեկնաբանման սկզբունքները. դ.ճիշտ է կարողանում ներկայացնել աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքերը:
Ուսումնառության արդյունք 2	Կազմում է կոլեկտիվ աշխատանքային պայմանագիր.
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է կազմում կոլեկտիվ պայմանագրեր. բ. ճիշտ է ներկայացնում կոլեկտիվ պայմանագրերի մակարդակները. գ. ճիշտ է ներկայացնում հանրապետական, ճյուղային և տարածքային կոլեկտիվ պայմանագրերի կնքման, գրանցման, լուծման կարգերը. դ. կարողանում է կազմել կազմակերպության կոլեկտիվ պայմանագիր. ե. ճիշտ է ներկայացնում կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի կողմերը. զ. ճիշտ է ներկայացնում կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի նախագծի մշակման և քննարկման կարգը. է. ճիշտ է ներկայացնում կազմակերպության կոլեկտիվ պայմանագիրը փոփոխելու և լրացնելու կարգը. ը. ճիշտ է ներկայացնում կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի լուծման կարգը:
Ուսումնառության արդյունք 3	Կազմում է անհատական աշխատանքային պայմանագիր.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքային պայմանագրի հասկացությունը, աշխատանքային պայմանագրի բովանդակությունը. բ.ճիշտ է ներկայացնում աշխատանքային պայմանագրի ձևը և կնքման կարգը. դ.ճիշտ է ներկայացնում աշխատանքի ընդունման ժամանակ պահանջվող փաստաթղթերի ցանկը. ե.ճիշտ է լրացնում աշխատանքային գրքույկը. զ.թվարկում է աշխատանքային պայմանագրի տեսակները. է. ճիշտ է ներկայացնում աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը:
Ուսումնառության արդյունք 4	Կարողանում է կատարել աշխատաժամանակի, հանգստի ժամանակի, աշխատավարձի հաշվարկում, ներկայացնել աշխատանքային վեճերի լուծման կարգը.
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում աշխատաժամանակի կառուցվածքը. բ.ճիշտ է ներկայացնում աշխատաժամանակի տևողությունը. գ.ճիշտ է ներկայացնում արտաժամյա աշխատաժամանակի սահմանափակումները. դ.ճիշտ է ներկայացնում ամենամյա արձակուրդ տրամադրելու կարգը. ե.ճիշտ է ներկայացնում աշխատանքի վարձատրության կազմակերպումը. զ.ճիշտ է ներկայացնում աշխատանքային կարգապահության և կազմակերպության ներքին կարգապահական կանոնները. է. ներկայացնում է աշխատանքային վեճերի հասկացությունը, տեսակները, մարմինները և լուծման կարգը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱ»	

Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-011
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին իրավական տեքստերի, նորմատիվ իրավական ակտերի դրույթների պարզաբանում և բացատրում սովորեցնելու համար, որպեսզի նա տիրապետելով և արդյունքում օգտագործելով մեկնաբանողական տեխնիկան և տեխնոլոգիան /միջոցները, եղանակները, մեթոդները/, վեր հանի իրավական դրույթների իմաստը՝ տառացի բովանդակությունը, ինչպես նաև դրանց ոգին, իրավունքի նորմերի ճիշտ կենսագործումն ու կիրառումը ապահովելու համար:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ», ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք» և ԻՐԳ 4-09-006 «Քրեական իրավունք», ԻՐԳ 4-09-008 «Քաղաքացիական իրավունք» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բացատրում է իրավունքի նորմերի մեկնաբանման հասկացությունը, անհրաժեշտությունը և գործառույթները, տարբերում է մեկնաբանման կողմերը, տեսակները:
Կատարման չափանիշներ	ա. հասկանում է մեկնաբանման որպես իրավական գործունեության տեսակի անհրաժեշտությունը, պատճառները, գործառույթները. բ. տարբերում է մեկնաբանման տեսակները ըստ սուբյեկտների. գ. նշում է առօրեական, մասնագիտական, գիտական մեկնաբանման բնութագրական գծերը. դ. թվարկում է պաշտոնական մեկնաբանման տեսակները:
Ուսումնառության արդյունք 2	Ճիշտ է ընտրում իրավական դրույթների մեկնաբանման համար անհրաժեշտ և պատշաճ միջոցները: շ
Կատարման չափանիշներ	ա. տարբերում է մեկնաբանողական տեխնիկան և տեխնոլոգիան. բ. ճիշտ է ընտրում մեկնաբանաման համար անհրաժեշտ միջոցները. նորմատիվ փաստաթղթերի տեքստեր, գիտապրակտիկ գրականություն, համակարգչային տեխնիկա և այլն. գ. հանձնարարված նորմատիվ դրույթը մեկնաբանելիս ճիշտ է ընտրում մեկնաբանաման հնարքը. դ. գիտի և կարող է կիրառել նորմատիվ ակտերի իմաստի նվաճման մեթոդները (ճանապարհները):
Ուսումնառության արդյունք 3	Տիրապետում է իրավունքի նորմերի մեկնաբանման լեզվաբանական և տրամաբանական հնարքներին:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է հասկանում առանձին բառերի իմաստը, կատարում է նախադասության քերականական վերլուծություն. բ. ճիշտ է հասկանում բառերի կապը նախադասության մեջ, և որոշում է նախադասության ամբողջական կառուցվածքը, կետադրական նշանների ու շաղկապների դերը. գ. կատարում է իրավական դրույթի տրամաբանական վերակազմակերպում /վերականգնում է նախադասության բոլոր մասերը, դուրս է բերում դրանից տրամաբանական եզրահանգումներ, ընդհանուր դրույթից բխեցնում է մասնավոր նորմերը և այլն/. դ. կառուցում է ճիշտ եզրակացություններ իրավական հասկացություններից, անալոգիա, եզրահանգում հակառակ դատողությունից, օգտագործում է աբսուրդի մեթոդը:
Ուսումնառության արդյունք 4	Տիրապետում է իրավունքի նորմերի մեկնաբանման համակարգային և նպատակային հնարքներին:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է որոշում նորմերի միջև առկա ստորակարգության, համադասության և կոնկրետացման կապերը. բ. ճիշտ է որոշում նորմերի միջև գործառույթային կապերը՝ բնորոշող, ընդհանուր և հատուկ, կոլլիզիոն, վկայակոչող և բլանկետային. գ. ճիշտ է որոշում նորմերի կապերը ըստ իրավական ուժի. դ. բացատրում է իրավական նորմի նպատակները՝ ելնելով նորմի սոցիալական նպատակներից:
Ուսումնառության արդյունք 5	Տիրապետում է իրավունքի նորմերի մեկնաբանման հատուկ-իրավաբանական և գործառութային հնարքներին:
Կատարման չափանիշներ	ա. մեկնաբանվող իրավական դրույթից կարողանում է դուրս բերել արգելքը, պարտադրանքը, հնարավորությունը. բ. կարողանում է ստուգել և պարզել նորմի ընդունման օրինականությունը. գ. կարողանում է ստուգել նորմի գործողությունը ժամանակի և տարածության մեջ, ըստ անձանց շրջանակի. դ. կարողանում է մեկնաբանել նորմը հաշվի առնելով նրա գործողության արտաքին քաղաքական, տնտեսական, սոցիալական, բարոյական և այլ պայմանները:
Ուսումնառության արդյունք 6	Մեկնաբանման արդյունքում ստանում է ճիշտ՝ մեկնաբանվող դրույթի իրական բովանդակությունը արտահայտող եզրահանգումներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է որոշում մեկնաբանվող դրույթի տառացի և ստացված բովանդակության հարաբերակցությունը.

	բ. ճիշտ է կառուցում տարածական մեկնաբանման հետևանքով ստացված եզրահանգումները և դրանց իրավական հետևանքները. գ. ճիշտ է կառուցում սահմանափակ մեկնաբանման հետևանքով ստացված եզրահանգումները և դրանց իրավական հետևանքները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԻՐԱՎԱԻՐԱՑՆՈՂ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-012
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին սովորեցնելու ա/ իրավունքի կենսագործման անմիջական ձևերի տեսակից անհրաժեշտ գործողությունների և փաստաթղթերի շրջանակը որոշելու, այդ փաստաթղթերի տեսակները առանձնացնելու և նման փաստաթղթերը /օրինակ՝ դիմում, լիազորագիր, անդորագիր և այլն) կազմելու վարպետություն, բ/ մանրազնին հետազոտել իրավաբանական գործի փաստական հանգամանքները՝ ելնելով իրավակիրառման տեսակից /կոնկրետացում, վերահսկողություն, վեճի լուծում, սանկցիայի կիրառում/, կատարել ճիշտ որակում, պատրաստել իրավակիրառական ակտի նախագիծ, որը համապատասխանում է իրավական գրագրության և լեզվի պահանջներին ու կանոններին:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ», ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք», ԻՐԳ 4-09-006 «Քրեական իրավունք» և ԻՐԳ 4-09-008 «Քաղաքացիական իրավունք» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ճիշտ է որոշում իրավունքի կենսագործման անմիջական ձևերի տեսակից բխող անհրաժեշտ գործողությունների և փաստաթղթերի շրջանակը
Կատարման չափանիշներ	ա. տարբերում է իրավունքի կենսագործման անմիջական և միջնորդավորված ձերը. բ. ճիշտ է կարողանում որոշել իրավունքի կենսագործման անմիջական ձևի տեսակը՝ իրավական նորմերի պահանջներից ելնելով. գ. Ճիշտ է որոշում իրավաիրացնող գործողությունը՝ իրավունքի կենսագործման անմիջական ձևի տեսակից ելնելով. դ. Ճիշտ է որոշում իրավաիրացնող փաստաթղթի տեսակը՝ իրավունքի կենսագործման անմիջական ձևի տեսակից ելնելով:
Ուսումնառության արդյունք 2	Կազմում է իրավունքի կենսագործման անմիջական ձևերի համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ դիմում, լիազորագիր, անդորրագիր և այլն
Կատարման չափանիշներ	ա. պատրաստում է համապատասխան փաստաթուղթը. բ. պահպանում է փաստաթուղթը կազմելու կանոնները՝ համառոտություն, հստակություն, ճշգրտություն, լրիվություն /բոլոր անհրաժեշտ տվյալների պարունակում/. գ. պահպանում է իրավական փաստաթղթեր ռեկվիզիտային և դրա ձևին ներկայացվող կանոնները:
Ուսումնառության արդյունք 3	Մանրազնին հետազոտում է իրավաբանական գործի փաստական հանգամանքները:
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է որոշված իրավաբանական գործի կամ դեպքի լուծման նպատակները և խնդիրները. բ. բազմակողմանի և օբյեկտիվորեն վեր են հանված ու հետազոտված դեպքի կամ իրավական գործի բոլոր փաստական հանգամանքները. գ. հետազոտված դեպքի կամ իրավական գործի բոլոր փաստական հանգամանքները ամրագրված են օրենքով սահմանված պատշաճ ձևերում:
Ուսումնառության արդյունք 4	Կատարում է հետազոտված դեպքի ճիշտ իրավաբանական որակում:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ են ընտրված տվյալ դեպքը կարգավորող իրավական ակտերը և նորմերը. բ. ընտրված նորմերը ստուգված են իրենց գործողության ժամանակի և տարածության մեջ. գ. օգտագործված են համանման գործերով իրավաբանական պրակտիկայի նյութերը. դ. կատարված է պատշաճ իրավական որակում:
Ուսումնառության արդյունք 5	Պատրաստում է իրավակիրառական ակտի պատշաճ նախագիծ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կազմված համապատասխան անհատական իրավական ակտի նախագիծ. բ. պատրաստված նախագծում պահպանված են անհատական իրավական ակտի բովանդակությանը և կառուցվածքին ներկայացվող պահանջները. գ. ակտում կիրառված են համապատասխան տրամաբանական հնարքները և լեզվական կանոները:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԻ ՏԵԽՆԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-013
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին իրավաբանական գրագրության և փաստաթղթաշրջանառության տեխնիկան և կանոները սովորեցնելու համար, որպեսզի նա կարողանա պարզ, հստակ և առավելագույնս ճշգրիտ ու կոնկրետ արտահայտել իր մտքերը՝ գրավոր և բանավոր կերպով, ամեն եզրակացություն հիմնավորել իրավական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներով, ինչպես նաև վկայակոչել հարաբերությունը կարգավորող իրավական ակտերը, դրանց համապատասխան նորմերը՝ պահպանելով իրավաբանական գրագրության տեխնիկայի և փաստաթղթաշրջանառության ընդհանուր կանոները:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ», ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք» և ԻՐԳ 4-09-008 «Քաղաքացիական իրավունք» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Տիրապետում է իրավաբանական գրագրության տեխնիկայի ընդհանուր բովանդակային կանոններին և պահանջներին:
Կատարման չափանիշներ	ա. ակտը կազմելուց ճիշտ է որոշված հանապատասխան հասարակական հարաբերության իրավական կարգավորման ոլորտը. բ. հաշվի է առնված իրավական կարգավորման միասեռությունը և կատարված է իրավունքի ճյուղի ճիշտ ընտրություն. գ. իրավական ակտը կազմելուց ճիշտ է կատարված իրավական ձևի ընտրությունը. դ. իրավական փաստաթուղթը համապատասխանում է միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին:
Ուսումնառության արդյունք 2	Տիրապետում է իրավաբանական գրագրության տեխնիկայի ընդհանուր տրամաբանական կանոններին և պահանջներին:
Կատարման չափանիշներ	ա. ակտը կազմված է իրավական եզրույթների հասկացման միասնականության պահպանմամբ. բ. փաստաթուղթը համաձայնեցված է այլ հարակից փաստաթղթերին, բացակայում են հակասությունները փաստաթղթի տարբեր մասերի միջև. գ. եզրակացությունները հիմնավորված են իրավական նշանակություն ունեցող փաստական համգամանքներով, իսկ առաջարկվող լուծումները կառուցված են համապատասխան օրենսդրական դրույթների վրա. դ. ակտում արտահայտված մտքերը տրամաբանորեն հետևողական են, համոզիչ, շրջապատի համար հասկանալի:
Ուսումնառության արդյունք 3	Տիրապետում է իրավաբանական գրագրության տեխնիկայի ընդհանուր կառուցվածքային և ընթացակարգային կանոններին և պահանջներին:
Կատարման չափանիշներ	ա. իրավական ակտը կազմված է փաստաթղթերի կառուցվածքի (ներքին ձևի) կանոնների պահպանմամբ. բ. ակտում հստակ առանձնացված են ներածական, հիմնական, եզրափակիչ մասերը. գ. պատշաճ կերպով օգտագործված են հավելվածները, վկայակոչումները, տողատակերը, ծանոթագրությունները. դ. փաստաթղթի կազմելու ժամանակը օգտագործված է օպերատիվ, նպատակասլաց, պլանավորված, ակտի հասցեատերերի շահերը հաշվառված են և համաձայնեցված:
Ուսումնառության արդյունք 4	Տիրապետում է իրավաբանական գրագրության տեխնիկայի ընդհանուր լեզվական և ձևային (ռեկվիզիտային) կանոններին և պահանջներին:
Կատարման չափանիշներ	ա. կազմված փաստաթուղթը պարզ է, հասկանալի, համառոտ, իսկ լեզվական ոճը պաշտոնական է: բ. փաստաթուղթը շարադրված է կոնկրետ, հստակ, առանց հուզական զեղումների. գ. բացակայում են հռչակագրային և ոչ իրավական ձևակերպումները. դ. փաստաթղթի տեսակին համապատասխան դրանում արտացոլված են ընդունող մարմինը, ակտի վերտառությունը, ընդունման ժամանակը, գրանցման համարը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-014
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին սովորեցնելու անհրաժեշտ մի շարք գործնական հմտություններ՝ կապված հաճախորդի հետ աշխատանքի հետ: Մասնագիտական գործունեության ընթացքում հաճախորդի հետ աշխատանքը նրանից պահանջում է երեք տեսակի հմտություններ. ա/ հիմնախնդրի հետազոտման և դիրքորոշման մշակման հմտություն-

	ներ /հարցազրույց, իրավական հետազոտություն, գործի վերլուծություն, գործով դիրքորոշման մշակում, խորհրդատվություն, ռազմավարության մշակում և պլանավորում, ապացուցում և այլն/, բ/ հաճախորդի շահերը ներկայացնելու հմտություններ /դիմում պետական իշխանության մարմիններին, աշխատանք պաշտոնյաների հետ, դատական ներկայացուցչություն, որոշումների բողոքարկում և այլն/, գ/ վեճերի լուծման այլընտրանքային եղանակների օգտագործման հմտություններ /բանակցություններ, միջնորդություն, արբիտրաժ/:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ», ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք» և ԻՐԳ 4-09-008 «Քաղաքացիական իրավունք» և ընդհանուր մասնագիտական հիմնական այլ մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կազմակերպում, անցկացնում, ամփոփում և ավարտում է հաճախորդի հետ հարցազրույցը.
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է հարցազրույցի նախապատրաստական փուլի խնդիրները. բ. հաճախորդի հետ առաջին շփումից ելնելով՝ կարողանում է կատարել փոխադարձ ներկայացումը և որոշել հետագա խաղի կանոնները. գ. տիրապետում է հարցադրումների կատարման տեխնոլոգիային, դ. պահպանում է հարցազրույցի անցկացման բարոյահոգեբանական կանոնները, ե. կարողանում է բացահայտել հաճախորդի իրավական խնդիրների էությունը, ամփոփել և ավարտել հարցազրույցը:
Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպում և իրականացնում է հաճախորդի խորհրդատվությունն իրավական հարցերով
Կատարման չափանիշներ	ա. իրավական խորհրդատվության իրականացման ընթացքում ճիշտ բացահայտում է հաճախորդի ներկայացրած իրավական հիմ-նախնդիրը. բ. իրավական խորհրդատվության իրականացման ընթացքում ճիշտ որոշում է իրավական հիմնախնդրի լուծման հնարավոր իրավական տարբերակները. գ. իրավական խորհրդատվության իրականացման ընթացքում ճիշտ որոշում է իրավական հիմնախնդրի լուծման իրավական հետևանք-ները. դ. իրավական խորհրդատվության իրականացման ընթացքում ճիշտ որոշում է ընտրված տարբերակի կենսագործման ուղղությունները և միջոցները:
Ուսումնառության արդյունք 3	Տիրապետում է մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ իրավական ներկայացուցչական հմտություններին.
Կատարման չափանիշներ	ա. ելնելով իր դատավարական դերից և գործառույթից ճիշտ մշակում է գործով դիրքորոշումը. բ. ընտրված դիրքորոշումից ելնելով ճիշտ կատարում է գործով դիրքորոշման ձևակերպումը և արտահայտում է այն. գ. կարողանում է կենսագործել դիրքորոշումը դատարան ներկայացվող փաստաթղթում՝ պատրաստելով հայցադիմում. դ. կարողանում է կենսագործել դիրքորոշումը դատարան ներկայացվող փաստաթղթում՝ պատրաստելով պատասխանողի գրավոր ա-ռարկությունները:
Ուսումնառության արդյունք 4	Կարողանում է նախապատրաստել քաղաքացիական հայցադիմում.
Կատարման չափանիշներ	ա. ելնելով վեճի ուղղվածությունից ճիշտ և հմուտ նախապատրաստում է քաղաքացիական հայցադիմում՝որոշելով հայցապահանջը, հայցագինը. բ. կազմում է հայցադիմումի տեքստը ու որոշում է հայցադիմումին կից փաստաթղթերը:
Ուսումնառության արդյունք 5	Տիրապետում է իրավական ճառախոսության հմտություններին.
Կատարման չափանիշներ	ա. ելնելով դատարանում իր մասնակցության դերից ինքնավստահ, համոզված կառուցում է իր ելույթը. բ. ելույթը աչքի է ընկնում ամբողջականությամբ, հետևողականությամբ. գ. ելույթը աչքի է ընկնում հստակությամբ, հակիրճությամբ, խոսքի արտահայտչականությամբ և այլն:
Ուսումնառության արդյունք 6	Առաջարկում և կիրառում է իրավական վեճերի լուծման այլընտրանքային եղանակները.
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է իրավական վեճերի լուծման այլընտրանքային եղանակների հասկացությունը և նշանակությունը. բ. տարբերում է բանակցությունները, միջնորդությունը, արբիտրաժը. գ. տիրապետում է բանակցությունների, միջնորդության, արբիտրաժի անցկացման փուլային հմտություններին.

	դ. հետևում է վեճերի լուծման այլընտրանքային եղանակների համար մշակված կիրառական հմտություններին:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-015
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին սովորեցնել պայմնագրային իրավունք, քաղաքացիաիրավական պայմանագրերի տեսակները, ելնելով դրանց տեսակից և իրավական նշանակությունից կազմել պայմանագրերի նախագծեր, պահապանելով դրանց տիպային կառուցվածքը, կնքել պայմագրեր՝ համաձայնեցնելով պայմանագրերի պայմանները կոնտրագենտների հետ, վավերացնել պայմանագրերը իենց համապատասխան ձևերով, վերահսկել պայամանագրերի կատարման ընթացքը:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ», ԻՐԳ 4-09-008 «Քաղաքացիական իրավունք» և ընդհանուր մասնագիտական հիմնական այլ մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Բութագրում է պայամանագրային իրավունքը և դրա կառուցվածքը.
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է քաղաքացիաիրավական պայմանագիր հասկացությունը, բնութագրում է պայմանագրային իրավունքը և դրա կառուցվածքը. բ. բացատրում է պայմանագրի ազատության որպես քաղաքացիական իրավունքի սկզբունքի բովանդակությունը. գ. ճիշտ է մեկնաբանում պայմանագրի և օրենքի հարաբերակցությունը:
Ուսումնառության արդյունք 2	Բնութագրում է քաղաքացիաիրավական պայմանագրի կնքման կարգը.
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու հասկացությունը, գիտի նախապայմանագրային բանակցությունները և դրա փուլերը. բ սահմանում է օֆերտայի հասկացությունը և դրան ներկայացվող պարտադիր պահանջները, տարբերում օֆերտա անելու հրավերը, հրա-պարակային օֆերտան, մեկնաբանում օֆերենտի կաշկանդվածությունը և օֆերտայի անհետկանչելիությունը. գ. սահմանում է ակցեպտի հասկացությունը, գիտի ակցեպտի դրսևորման ձևերը, ակցեպտի ուժի մեջ մտնելու պահը (փոստային արկղի տեսությունը և ստանալու տեսությունը). մեկնաբանում է ակցեպտի ժամկետը և ուշացումով ստացված ակցեպտը. դ. սահմանում է պայմանագիր կնքելու պահի և վայրի իրավական նշանակությունը, տարբերում է ռեալ պայմանագրերի կնքման պահը, պետական գրանցման ենթակա պայմանագրերի կնքման պահը, պայմանագրի ուժի մեջ մտնելու պահը:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնում է օրենքով նախատեսված կամ կամովին ստանձնված պարտավորությամբ նախատեսված պարտադիր պայմանագրերի կնքման առանձնահատկությունները.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում նախնական պայմանագիր հասկացությունը, նախնական պայմանագրի ձևը, գիտի մտադրությունների մասին հա-մաձայնության, բանակցությունների արձանագրության իրավական նշանակությունը. բ. նկարագրում է քաղաքացիական պայմանագիր կնքելը սակարկություններով, տարբերում է աճուրդը և մրցույթը. գ. սահմանում է հրապարակային պայմանագիր հասկացությունը, բնութագրում հրապարակային պայմանագրի հատկանիշները. ում է միանալու պայմանագիր հասկացություն, բնութագրում դրա հատկանիշները:
Ուսումնառության արդյունք 4	Բնութագրում է պայմանագրային հարաբերությունների մասնակցիների կազմը, բովանդակությունը, ձևը:
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է պայմանագրի բովանդակություն հասկացությունը, բնութագրում օրենքի և պայմանագրի պայմանների հարաբերակցութ-յունը. բ. գիտի պայմանագրի ձևին ներկայացվող պահանջները, բանավոր և գրավոր պայմանագրերը, բնութագրում է պայմանագրերի օրինակե-լի բլանկները և օրինակելի պայմանագրերը. գ. թվարկում է պայմանագրի օրենքով սահմանված ձևի չպահպանման հետևանքները. դ. ճիշտ ներկայացնում է քաղաքացիական օրենսգրքով ամրագրված պայմանագրի պայմանների մեկնաբանման եղանակները:
Ուսումնառության արդյունք 5	Սահմանում է քաղաքացիաիրավական պայմանագրի կատարման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը.
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է պայմանագրի կատարման հասկացությունը, տարբերում պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատար-ման և իրական (բնեղենով) կատարման սկզբունքները.

	բ. գիտի պարտավորության կատարման հետևանքով պարտավորության դադարման իրավական վավերացման նշանակությունը ի դեմս պարտքային պարտքային փաստաթղթերի վերադարձի, ստացականի. գ. սահմանում է պայմանագրային պարտավորությունը պատշաճ անձի նկատմամբ և պատշաճ անձի կողմից կատարելը, կատարման ա-ռարկան, եղանակը, վայրը, ժամկետը, որպես պատշաճ կատարման տարրեր. դ. թվարկում է պայմանագիրը փոփոխելու կամ լուծելու ընդհանուր հիմքերը, գիտի պայմանագիրը փոփոխելու և լուծելու կարգը և հետևանքները:
Ուսումնառության արդյունք 6	Որոշում է հարաբերության կարգավորման ոլորտը և համապատասխան պայմանագրի տեսակը
Կատարման չափանիշներ	ա. գիտի պայմանագրի հասկացությունը, տեսակները, նշանակությունը և բովանդակությունը. բ. պատկերացնում է պայմանագրի տիպային կառուցվածքը. գ. առանձնացնում է տվյալ պայմանագրի հիմնական մասի բովանդակային հարցերը. առարկան, գինը, կատարման ժամկետ, հատուկ և լրացուցիչ պայամանները, վճարման կարգը, պատասխանատվությունը, արտակարգ իրավիճակները կամ անհաղթահարելի ուժը, պայամանագրի գործողությունը:
Ուսումնառության արդյունք 7	Կատարում է պայմանագրի կնքմանն ուղղված բոլոր նախապատրաստական աշխատանքները և կնքում է պայմանագիրը՝ դրա ձևին ներկայացվող բոլոր պահանջներին համապատասխան
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է մտնել նախապայմանագրային կապերի մեջ ապագա կոնտրագենտների հետ. բ. կազմում է պայմանագրային աշխատանքի և բանակցությունների անցկացման պլան. գ. նպատակամղված, «չոր», ճկուն կերպով վարում է պայմանագրային բանակցությունները. դ. պատրաստում է պայմանագրային հիմնական փաստաթղթերը, այդ թվում պայմանագրի տեքստի նախագիծը՝ պահպանելով պայմանագրի բոլոր պայմանները և համապատասխան կառուցվածքը: ե. պայմանագրի ձևից ելնելով՝ կարողանում է առանձնացնել պայմանագրի կնքման առանձնահատկությունները. զ. հատուկ գրավոր ձևով պայամանագրեր կնքելու դեպքում պահպանված են դրա վավերացման և գրանցման պահանջները:
Ուսումնառության արդյունք 8	Տեղեկացնում է շահագրիգիռ անձանց պայմանագրի և դրա կատարման պայմանների մասին, վերահսկում ու գնահատում է կատարման ընթացքը
Կատարման չափանիշներ	ա. պայմանագրում շահագրգիռ կամ այն կատարող անձինք պատշաճ ձևերով տեղեկացված են պայմանագրի բովանդակությանը. բ. կարողանում է կազմել պայմանագրային պարտավորությունների կատարման գրաֆիկ. գ. պարբերաբար վերահսկում է պայմանագրերի կատարման ընթացքը և խախտումների դեպքում տեղեկացնում է համապատասխան անձանց. դ. կարողանում է գնահատել պայմանագրերի կատարումը և մշակել առաջարկություններ՝ ուղղված պայմանագրային պարտավորությունների կատարման կատարելագործմանը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՀ ԴԱՏԱՐԱՆԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀՊԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-016
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին տալ գիտելիքներ իրավապահ մարմինների, այդ թվում դատական իշխանության, դատարանակազմության, արդարադատության, դատախազության, նախաքննության մարմինների, ոստիկանության, արդարադատության նախարարության, նոտարիատի, դատական ակտերի հարկադիր կատարման համակարգի խնդիրների և գործառույթների մասին: Այս մոդուլի նպատակն է նաև ուսանողին հաղորդել գիտելիքներ Հայաստանում փաստաբանական գործունեության և փաստաբանների մասնագիտական միավորումների մասին:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ», ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք» և ԻՐԳ 4-09-008 «Քաղաքացիական իրավունք» և ընդհանուր մասնագիտական հիմնական այլ մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնում է դատական իշխանության հասկացությունը, գործառույթները, արդարադատության սկզբունքները, բնութագրում է դատական համակարգը և նրա օղակների գործառույթները.

Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ բնութագրում է դատական իշխանության հասկացությունը, տեղը և դերը իշխանությունների տարանջատման համակարգում. բ. թվարկում է դատական իշխանության գործառույթները և մեկնաբանում դրանք. գ. թվարկում և մեկնաբաում է դատական իշխանության կազմավորման և գործունեության /արդարադատության/ սկզբունքները, անկաշկանդ կարողանում է մեկնաբանել ՀՀ Սահմանադրության «Դատական իշխանություն» գլխի հոդվածները: դ. թվարկի և բնութագրի դատարանակազմության ընդհանուր սկզբունքները, նկարագրի դատական համակարգը և բացատրի նրա օղակների գործառույթները. ե. նկարագրի արդարադատության խորհրդի կարգավիճակը և թվարկի լիազորությունները. զ. բացատրի դատավորների կարգավիճակի առանձանահատկությունները և դրանց նշանակությունը. է. ներկայացնի սահմանադրական դատարանի կազմավորման կարգը, գործառույթները, լիազորությունները. սահմանադրական դատարան դիմելու կարգն ու պայմանները.
Ուսումնառության արդյունք 2	Պատկերացնում է դատախազության դերը պետական մարմինների համակարգում, կառուցվածքը, թվարկում ու մեկնաբանում դրա սահմանադրական լիազորությունները.
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնի դատախազության սահմանադրական կարգավիճակը, համակարգը. բ. ներկայացնի դատախազության կազմակերպական համակարգը. գ. թվարկի և բացատրի դատախազության սահմանադրական լիազորությունները.
Ուսումնառության արդյունք 3	Բնութագրում է ոստիկանության խնդիրները, համակարգը, գործնեության ուղղությունները, նկարագրում է նախնական քննության մարմինների խնդիրները, կառուցվածքը.
Կատարման չափանիշներ	ա. նկարագրի ոստիկանության տեղը և դերը իրավապահպան մարմինների համակարգում, նրա գործունեության ոլորտները. բ. թվարկի ոստիկանության հիմնական ծառայությունները, գ. ներկայացնի ոստիկանության իրավունքները և պարտականությունները. դ. բացատրի նախնական քննության մարմինների դերը իրավախախտումների դեմ պայքարում. ե. նկարագրի նախաքննության մարմինները համակարգը. զ. բացատրի նախաքննության մարմինների գործառույթները:
Ուսումնառության արդյունք 4	Բնութագրում է արդարադատության նախարարության գործառույթները, կառուցվածքը:
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնի արդարադատության նախարարության դերը որպես գործադիր պետական կառավարման մարմին. բ. ներկայացնի արդարադատության նախարարության կառուցվածքը. գ. թվարկի և բացատրի արդարադատության նախարարության գործառույթները. դ. ներկայացնի արդարադատության նախարարության դերը նոտարիատի, դատական ակտերի հարկադիր կատարման և քրեակատարողական հիմնարկների գործունեության կազմակերպման և հսկողության գործում:
Ուսումնառության արդյունք 5	Բնութագրում է նոտարիատի և քաղաքացիական կացության գրանցման մարմինների գործառույթները, իրավունքները և պատասխանատվությունը.
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնի նոտարիատի օրենսդրական խնդիրները, նոտարական գործնեության կազմակերպման օրենսդրական պահանջները. բ. թվարկի նոտարի իրավունքները, պարտականությունները և բացատրի պատասխանատվությունը. գ. ներկայացնի նոտարական գործողությունների իրականացման կարգը և պահանջները. դ. բնութագրի քաղաքացիական կացության գրանցման մարմինների գործառույթները, իրավունքները և պատասխանատվությունը:
Ուսումնառության արդյունք 6	Բնութագրում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության խնդիրները և գործառույթները, գործունեության կարգը:
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնի դատական ակտերի հարկադիր կատարման մարմինների օրենսդրական խնդիրները. բ. թվարկի հարկադիր կատարողների իրավունքները և պարտականությունները. գ. թվարկի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը ենթակա դատական ակտերը. դ. բացատրի հարկադիր կատարման կարգը:
Ուսումնառության արդյունք 7	Բնութագրում է փաստաբանական գործունեությունը, դրա կազմակերպման և գործունեության կարգը:
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ սահմանում է փաստաբանի հասկացությունը, թվարկում է նրա հիմնական իրավունքները և հիմնական պարտականությունները. բ. թվարկում է փաստաբանի գործունեության երաշխիքները, սահմանում փաստաբանական գաղտնիքի հասկացությունը. գ. Ճիշտ սահմանում է փաստաբանի օգնականի և փորձնակի իրավունքներն ու պարտականությունները.

	դ. ճիշտ է բացատրում փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու կարգը, արտոնագիրը դադարեցնելու և կասեցնելու կարգը. ե. ճիշտ սահմանում է փաստաբանի կարգապահական պատասխանատվությունը, գիտի փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի տեսակները. զ. բացատրում է հանրային պաշտպանի դերն ու նշանակությունը
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-017
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին սովորեցնել ընտանեկան օրենսդրության հիմնադրույթները և դրան համապատասխան ձևավորել կարողություններ ընտանեկան իրավունքների իրականացման, ընտանեկան պարտականությունների կատարման, ամուսնություն կնքելու պայմանների ու կարգի, ամուսնության դադարման, ամուսինների իրավունքների ու պարտականությունների, ալիմենտային պարտավորությունների, որդեգրման, խնամակալության և հոգաբարձության, խնամատարության վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ», ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք» և ԻՐԳ 4-09-008 «Քաղաքացիական իրավունք» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կարողանում է ներկայացնել ընտանեկան իրավունքի հասկացությունը և հիմնական սկզբունքները.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ ներկայացնում է ընտանեկան իրավունքով կարգավորվող հարաբերությունները. բ. ճիշտ ներկայացնում է ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքները. գ. ճիշտ ներկայացնում է ընտանեկան իրավունքի աղբյուրները և ընտանեկան օրենսգրքի կառուցվածքը. դ. կարող է անալոգիայի կարգով քաղաքացիական օրենսդրությունը կիրառել ընտանեկան հարաբերությունների նկատմամբ, ե. ճիշտ կարողանում է կիրառել ընտանեկան հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը:
Ուսումնառության արդյունք 2	Կարողանում է ներկայացնել ընտանեկան իրավունքների իրականացման և ընտանեկան պարտականությունների կատարման կարգը.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում է ընտանեկան իրավունքների իրականացման կարգը. բ. ճիշտ է ներկայացնում է ընտանեկան պարտականությունների կատարման կարգը. գ. ճիշտ է կարողանում կիրառել հայցային վաղեմությունը ընտանեկան հարաբերություններում:
Ուսումնառության արդյունք 3	Կարողանում է ներկայացնել ամուսնալուծության կնքման և դադարման հիմքերը և կարգը.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ամուսնություն կնքելու կարգը. բ. ճիշտ է ներկայացնում ամուսնություն կնքելուպայմանները. գ. ճիշտ է ներկայացնում ամուսնության կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքները. դ. ճիշտ է ներկայացնում ամուսնության դադարման հիմքերը. ե. ճիշտ է կարողանում ներկայացնել ամուսնալուծության կարգը. զ. ճիշտ է ներկայացնում ամուսնալուծվելիս ամուսինների միջև ծագող վեճերի քննարկման կարգը:
Ուսումնառության արդյունք 4	Կարողանում է ներկայացնել ամուսինների իրավունքների ու պարտականությունները.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ամուսինների իրավահավասարությունն ընտանիքում. բ. ճիշտ է ներկայացնում ամուսինների կողմից ազգանվան ընտրության իրավունքը. գ.կարողանում է կազմել ամուսնական պայմանագիր. դ. ճիշտ է ներկայացնում ամուսնական պայմանագրի բովանդակությունը. ե. ճիշտ է ներկայացնում ամուսնական պայմանագրի փոփոխման և լուծման կարգը:
Ուսումնառության արդյունք 5	Կարողանում է ներկայացնել ծնողների ու զավակների ալիմենտային պարտավորությունները:
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնել երեխաների համար դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը. բ.ճիշտ է ներկայացնել անաշխատունակ, անչափահաս զավակների ալիմենտի իրավունքը. գ.կարողանում է կազմել ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնագիր.

	դ.ճիշտ է ներկայացնում ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնագրի կնքման, կատարման, փոփոխման, լուծման և անվավեր ճանաչման կարգը:
Ուսումնառության արդյունք 6	Կարողանում է ներկայացնել որդեգրման, խնամակալության, հոգաբարձության, խնամատարության կարգը
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում երեխաների խնամակալության կամ հոգաբարձության կարգը. բ.ճիշտ է ներկայացնում որդեգրելու իրավունք ունեցող անձանց. գ.կազմում է դաստիարակության համար երեխային ընտանիք հանձնելու մասին պայմանագիր:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-018
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին սովորեցնելու ձեռնարկատիրական (գործարարական) իրավունքի հասկացության, կառուցվածքի, այդ թվում ձեռնարկատիրության կազմակերպական իրավական ձևերի, ձեռնարկատիրության սուբյեկտների կազմակերպման և դադարեցման կարգի, կազմակերպությունների սնանկության ինստիտուտի, ֆինանսական իրավունքի հիմունքների, բյուջետային իրավունքի հիմունքների, հարկային իրավունքի հիմունքների, արժեթղթերի հասկացության և տեսակների, բանկային գործունեության համակարգի իրավական հիմունքները:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ», ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք» և ԻՐԳ 4-09-008 «Քաղաքացիական իրավունք» և ընդհանուր մասնագիտական հիմնական այլ մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կարողանում է նկարագրել ձեռնարկատիրական օրենսդրության կառուցվածքը /ոլորտները/ և դրանց իրավական կարգավորման աղբյուրները.
Կատարման չափանիշներ	ա. գիտի տնտեսական գործունեության և ձեռնարկատիրական հասկացությունը. բ. սահմանում է ձեռնարկատիրական իրավունքը. գ. կարողանում է թվարկել ձեռնարկատիրական օրենսդրության կառուցվածքը. դ. մատնանշում է ձեռնարկատիրության առանձին ոլորտների իրավական կարգավորման աղբյուրները:
Ուսումնառության արդյունք 2	Պատկերացնում է տնտեսական գործունեության իրավական և պետական կարգավորման հիմունքները.
Կատարման չափանիշներ	ա. հասկանում է տնտեսական գործունեության պետահիրավական կարգավորման նպատակները և սկզբունքները. բ. տարբերում է տնտեսության պետական կարգավորման ձևերը /կանխատեսում, կառավարում, պլանավորում, իրավական կարգավորում, վերահսկողություն/. գ. թվարկում և բացատրում է տնտեսության պետական կարգավորման մեթոդները /գրանցում, թույլտվություն, սերտիֆիկացում, լիցենզավորում և այլն/. դ. թվարկում և բացատրում է տնտեսության պետական կարգավորման տնտեսական մեթոդները / քվոտաներ, հարկեր, գներ, վարկեր և այլն/:
Ուսումնառության արդյունք 3	Սահմանում է ձեռնարկատիրության կազմակերպական իրավական ձևերը և սուբյեկտները.
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է անհատ ձեռնարկատիրոջ և կոլեկտիվ ձեռնարկատիրության տարբերությունները. բ. թվարկում է կոլեկտիվ ձեռնարկատիրության կազմակերպաիրավական ձևերը և նշում յուրաքանչյուրի առանձնահատկությունները. գ. կարողանում է բնութագրել ձեռնարկատիրության ոլորտում հատուկ իրավական կարգավիճակ ունեցող սուբյեկտների կարգավիճակը /բանկեր, բորսաներ, ֆոնդեր, ապահովագրական ընկերություններ/:
Ուսումնառության արդյունք 4	Տիրապետում է սնանկության և հակամենաշնորհային օրենսդրության հիմունքներին. սահմանում է ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակի, գների և տարիֆների իրավական կարգավորման հիմունքները.
Կատարման չափանիշներ	ա. հասկանում է սնանկության /անվճարունակության/ ինստիտուտի իրավական նշանակությունը և գիտի դրա կարգավորման աղբյուրները. բ. տարբերում է սնանկությունը և անվճարունակությունը. գ. գիտի անվճարունակ սուբյեկտի նկատմամբ կիրառվող ընթացակարգերը.

	դ. տիրապետում է հակամենաշնորհային օրենսդրության բովանդակությանը և գիտի դրա նպատակները:
Ուսումնառության արդյունք 5	Սահմանում է ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակի, գների և տարիֆների իրավական կարգավորման հիմունքները.
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է ներակայացնում որակ հասկացությունը, դրա գնահատման, ապահովման, վերահսկողության կառուցակարգերը և դրանց խախտման հետ կապված պատասխանատվությունը. բ. Ճիշտ է ներկայացնում գին և տարիֆ հասկացությունները, դրանց տեսակները և պատասխանատվությունը դրանց խախտման համար:
Ուսումնառության արդյունք 6	Տիրապետում է ձեռնարկատիրության ֆինանսավորման, ներդրումների, հաշվարկային և վարկային գործունեության իրավական կարգավորման հիմունքներին.
Կատարման չափանիշներ	ա. Ճիշտ է ներկայացնում ֆինանսավորման և ներդրումային գործունեության իրավական կարգավորման հիմունքները. բ. Ճիշտ է ներկայացնում հաշվարկների գործիքները, դրանց ձևերը, իրավական նշանակությունը, պատասխանատվությունը հաշվարկային հարաբերություններում. գ. Ճիշտ է սահմանում բանկային վարկի հասկացությունը, գիտի նրա տեսակները և վարկավորման սկզբունքները. դ. Ճիշտ է սահմանում վարկային պարտքերը, վարկային պարտքի մարման կարգը և աղբյուրները:
Ուսումնառության արդյունք 7	Տիրապետում է հաշվապահական հաշվառման, հաշվետվության, աուդիտի իրավական հիմունքներին:
Կատարման չափանիշներ	ա. սահմանում է հաշվապահական հաշվառման և հաշվետվության իրավական նշանակությունը, դրանց իրավական ձևերը և անցկացման պահանջները, ինչպես նաև պատասխանատվությունը այդ ոլորտում խախտումների համար. բ. սահմանում է ստուգումների անցկացման օրենսդրական հիմքերը և կարգը. գ. սահմանում է աուդիտի հասկացությունը և տեսակները, դրա անցկացման նշանակությունը և հիմունքները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԻՐԳ 4-09-019
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է «Իրավագետ» որակավորմամբ մասնագետին ձեռնարկատիրական կորպորացիաների առանձին տեսակների կազմակերպման և կառավարման համակարգի մասին գիտելիքներ հաղորդելու և կորպորատիվ իրավունքի հարցերում հմտություններ ձևավորելու համար, որպեսզի նա կարողանա վերլուծել և նախապատրաստել կազմակերպությունների /կորպորացիաների/ իրավական գործունեության կատարելագործման, կորպորատիվ ակտերի համակարգման առաջարկներ, պատրաստել կորպորատիվ նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, կատարել կորպորատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման գործը:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԻՐԳ 4-09-001 «Պետության և իրավունքի տեսության հիմունքներ», ԻՐԳ 4-09-002 «Սահմանադրական իրավունք» և ԻՐԳ 4-09-008 «Քաղաքացիական իրավունք» և ընդհանուր մասնագիտական հիմնական այլ մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Տարբերում է կորպորատիվ կազմակերպությունների տեսակները և հասկանում դրանց կառավարման համակարգը.
Կատարման չափանիշներ	ա. գիտի կորպորացիաների ստեղծման և գրանցման կարգը. բ. տարբերում է կորպորատիվ կազմակերպությունների առանձին տեսակները և կատարում դրանց դասակարգում, բնութագրում է դրանցից ամեն մեկի առանձնահատկությունները. գ. կարողանում է կազմել համապատասխան կորպորատիվ կազմակերպության կառավարման համակարգի սխեման. դ. հասկանում է կորպորացիաների կառավարման ընդհանուր սկզբունքները և պատկերացնում է հնարավոր կառուցվածքային ստորաբաժանումների խնդիրները:
Ուսումնառության արդյունք 2	Հասկանում է կորպորատիվ իրավունքի էությունը և նշանակությունը, մատնանշում դրա աղբյուրները.
Կատարման չափանիշներ	ա. տարբերում է կորպորատիվ նորմերը և դրանց առանձնահատկությունները ընդհանուր իրավական նորմերից. բ. բացատրում է կորպորատիվ իրավունքի աղբյուրների համակարգը, այդ իրավունքի ստեղծման առանձնահատկությունները. գ. հասկանում է կորպորատիվ կարգավորման սոցիալական և իրավաբանական նշանակությունը. դ. թվարկում է կորպորատիվ հիմնական նորմատիվ ակտերի շրջանակը:
Ուսումնառության արդյունք 3	Տիրապետում է կորպորատիվ իրավական փաստաթղթերի պատրաստման տեխնիկային.

Կատարման չափանիշներ	ա. կազմակերպության տեսակից ելնելով ճիշտ է որոշում անհրաժեշտ կորպորատիվ իրավական ակտերի շջանակը. բ. կարողանում է կատարել կորպորատիվ իրավական ակտերի դասակարգում՝ ելնելով դրանց իրավաբանական ուժից, կարգավորման առարկայից, ընդունող սուբյեկտներից. գ. պահպանելով կորպորատիվ իրավաստեղծագործության ընդհանուր և հատուկ սկզբունքները կազմում է կորպորատիվ իրավական ակտերի նախագծեր. դ. իրականացնում է կորպարատիվ փաստաթղթերի համակարգչային և մատյանային հաշվառում, գրանցում ու պահպանում դրանք. ե. կորպարատիվ ակտերում օրենսդրությանը կամ միմյանց հակասող դրույթերի հայտնաբերման դեպքում տեղեկացնում է վերադասին այդ մասին:
Ուսումնառության արդյունք 4	Կարողանում է աշխատել կորպորատիվ իրավաբանական ծառայությունում:
Կատարման չափանիշներ	ա. հասկանում է կորպորատիվ իրավաբանական ծառայության դերը կորպորացիայի կառավարման գործում. բ. պատկերացնում է պայմանագրային կարգապահությունը և կարող է կազմակերպել դրա ամրապնդման աշխատանքը. գ. կարողանում է անցկացնել կորպորատիվ փաստաթղթերի իրավական փորձաքննություն. դ. կարող է ներկայացնել կորպորատիվ շահերը դատական և այլ մարմիններում, վերլուծել դատական նիստերի արդյուքները, մշակել առաջարկություններ կորպորացիաների համար:

Աղյուսակ 3

Միջին մասնագիտական կրթության 0201«Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման օրինակելի ուսումնական պլան

N	Առարկայախմբեր, առարկաներ և մոդուլներ	Շաբաթ-ների թիվը	Ուսանողի առավելագույն բեռնվածու-թյունը, ժամ	Պարտադիր լսարանային պարապմունք-ներ, ժամ	Ուսուց-ման երաշխա-վորվող տարին
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ				
1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		108	72	1
2	Տնտեսագիտության հիմունքներ		81	54	1
3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		81	54	1
4	Պատմություն		72	54	1
5	Ռուսաց լեզու		108	72	1
6	Օտար լեզու		108	72	1
7	Ֆիզիկական կուլտուրա		116	116	1,2
	ԸՆԴԱՄԵՆԸ		**674**	**494**	
	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ				
1	Էկոլոգիայի հիմունքներ		54	36	1
2	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		27	18	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		**81**	**54**	
	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
1	Հաղորդակցման հմտություններ		54	36	1
2	Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ		81	54	1
3	Համակարգչային օպերատորության հիմունքներ		108	72	1
4	Անվտանգություն և առաջին բուժօգնություն		51	34	1
5	Գործավարություն հիմունքներ		81	54	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		**375**	**250**	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1	Պետության և իրավունքի տեսության հիմունքներ		108	72	1
2	Սահմանադրական իրավունք		108	72	1
3	Մարդու իրավունքներ		81	54	1
4	Վարչական իրավունք		108	72	1
5	Վարչական վարույթ և դատավարություն		72	48	2
6	Քրեական իրավունք		81	54	2
7	Քրեական դատավարություն		81	54	2
8	Քաղաքացիական իրավունք		108	72	2
9	Քաղաքացիական դատավարություն		81	54	2
10	Աշխատանքային իրավունք		108	72	1
11	Իրավական մեկնաբանության մեթոդիկա		54	36	2
12	Իրավաիրացնող և իրավակիրառական տեխնիկա		54	36	2
13	Իրավաբանական գրագրություն և լեզվի տեխնիկա		81	54	2
14	Հաճախորդի հետ աշխատանքի հմտություններ		54	36	2
15	Պայմանագրային իրավունք և պայմանագրային գործ		108	72	2
	ԸՆԴԱՄԵՆԸ		**1287**	**858**	
	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1	ՀՀ դատարանակազմություն և իրավապահպան մարմիններ		81	54	1
2	Կորպարատիվ իրավունք և կառավարում		81	54	2
4	Ձեռնարկատիրական իրավունք		108	72	2
5	Ընտանեկան իրավունք		81	54	2
	ԸՆԴԱՄԵՆԸ		**351**	**234**	
	ԸՆՏՐՈՎԻ		**216**	**144**	
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ		**84**	**56**	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**58**	**3068**	**2088**	
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**200**	**200**	
	ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				
	ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ	**18**			
	ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ	**3**			
	ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ	**3**			
	ԸՆԴԱՄԵՆԸ	**82**			